

ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Հայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է լ է Ք օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ և քաղաքագլխի թաղման յանձնաժողովը յայտնում են, որ

ՊՕՂՈՍԻԶՄԱՅԼԵԱՆԻ

Թաղումը նշանակված է այսօր, մարտի 18-ին, շաբաթ օր: Յուզարկաւորութիւնը կը սկսվի երկաթուղու կայարանից դէպի վանքի մայր եկեղեցին, առաւօտեան 10 ժամին: Հանգուցեայի մարմինը կամփոփվի վանքի մայր եկեղեցու բազում:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Տաղանդով թէ փողով. Հայկական քննիչ յանձնաժողով. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Թիֆլիսի օտարերկրացիները. Ներքին գործերը. Նախկին Նոր-Նախիջևանից. Նախկին վերին-Արցախից. Նախկին խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաց հնազանդական հաստատութիւն. Նախկին Աւստրիայից. Ֆրանսիայ. Նախկին Թիֆլիսից. Նախկին Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՐՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Հայոց գրականութեան ձեւակերպութիւնը Սասունի կոտորածի մասին.

ՏԱՂԱՔԱՑԻՆ ԹԵ՛ ՓՈՂՈՎ

Թիֆլիսի քաղաքային մունիցիպալիտետի խնդիրքի համաձայն, քաղաքագլուխ Իզմայլեան այսօր պէտք է թաղվի վանքի մայր եկեղեցու բազում իբրև մի վերջին յարգաւնք նրա մատուցած ծառայութիւններին: Անկասկած, յարգանքը, պատիւը և եկեղեցու բազում թաղվելը չէ, որովհետև հայոց եկեղեցու բազմը, որտեղ թաղվելը մի ժամանակ, կոնսակաս տեսակետից, մեծ պատիւ էր, այժմ այլ ևս այդ նշանակութիւնը չունեն, քանի որ այժմ, ամեն մարդ, ով և լինի նա, փողով, մի քանի հարիւր ռուբլիով, կարող է թաղվի ո՛ր եկեղեցու բազում և կամենայ...

Պատիւը և յարգանքը ներկայ դէպքում վանքի մայր եկեղեցու բազում թաղվելն է, որտեղ թաղված են մի խումբ նշանաւոր մարդիկ, և որը այդպիսով յաւանդութիւն ունի հայկական պանթէօն լինելու: Խմբի մի տեղ ազգի նշանաւոր ներկայացուցիչների մարմինները, թաղել նրանց մի-

մեանց մօտ, և այդպիսով կազմակերպել ազգային պանթէօն, որտեղ մանողը իր առաջ տեսնի մի ազգի մարդ և տաղանդի ներկայացուցիչներին. — դա մի գեղեցիկ բարոյապէս ազդող և կրթիչ գործարար է: Սակայն ինչ է ներկայացնում իրանից այսօր վանքի մայր եկեղեցու բազմը: Տարաբաղաբար, ոչ թէ մի պանթէօն, այլ մի խառնուրդ, որտեղ թաղված են ամեն տեսակ մահկանացիներ...

ձմարիա է, վանքի բազում հանդուրժեալ են այնպիսի աչքի ընկնող հայեր, ինչպէս են գէնքի ներկայացուցիչներ. Լօրիս-Մէլիքօֆ, Տէր-Ղուկասօֆ, Ծօրիօնիկօֆ, Լազարեֆ, այնպիսի հոգեւորականներ, ինչպէս հռչակաւոր Գարրիէլ Ալվազովսկի, և այնպիսի արժանաւոր քաղաքացիներ, ինչպէս Յովհաննէս Խաչատրեան, կամ դպրոցական գործողներ, ինչպէս Պետրոս Դանիէան, կամ վերջապէս դպրոցի հիմնադիրներ և Ներսիսեան դպրոցին մեծ գումար կտակողներ. — սակայն այդ բոլորի հետ միասին այդ բազում, նոյն պանթէօնում, թաղված են անարժաններ, գանապան քահանաների կանայք, այս և այն հոգեւորականի ազգակաւոր, մի խօսքով այնպիսի մահկանացիներ, որոնց կողքին թաղվելը ոչ մի պատիւ չէ, և որոնք իրանց համար եկեղեցու բազում տեղ են գնել զանազան ճանապարհներով դիզած փողերով...

Հայոց մարդի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպէս Գրիգոր Արծրունի, Իսաֆի, Ծերենց պատիւ համարեցին թաղվել բուն ժողովրդական գերեզմանատան մէջ, Խօջիվանքում, — ուր ամենքի համար տեղ կայ: Բայց երբ հարցը գալիս է վանքի բազում թաղվելուն, երբ այնտեղ թաղվելը հասարակական յարգանքի նշան պէտք է համարվի, այն ժամանակ մենք հարցնում

ենք, արդեօք վանքի բազում թաղվելու համար ի՞նչ պէտք է ունենայ. տաղանդի, հասարակական առաքինութիւն, ինչպէս ներկայ դէպքն է, այն ժամանակ պէտք է վերջ դնել անարժան անձերի այդտեղ թաղելուն:

Իսկ եթէ վանքի բազում թաղվել կարող է ամեն մի մարդ, ով կը տայ եկեղեցուն մի քանի հարիւր, մի քանի հազար, այն ժամանակ նա այլ ևս չէ ներկայացնում այն պատուաւոր վայրը, որտեղ միայն անմահները տեղ պէտք է գտնեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՆԵՐ ԵՎ ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՆԵՐ

Լօնդոնի «Daily Telegraph» լրագրի մէջ տեղաված է նրա թղթակցի մի նոր հեռագիրը Մուշից, որը հաղորդում է հետևեալը.

«Չլքի-փաշան, ցանկանալով ոչնչացնել իր ձեռքով կատարած յանցանքների հետքերը, առաջարկեց հայ փախուսականներին վերադառնալ և վերադառնալ իրանց աւերված գիւղերը և նրանց խոտաջաւ դրա համար օգնութեան տալ իր զինուորներին: Գնդեգուզան գիւղի մէջ, ուր հարիւրաւոր այլադակված զինվորներ գտնվում էին մի մեծ փոսի մէջ, փորձեցին այրել այդ թշուառների զինվորները: Փորձը չհաջողվեց, հարեան գետակի հոսանքը դարձրին դէպի փոսը, յուսալով որ գետի հոսանքը կը տան իրանց յանցանքների այդ լուռ վկաներին, բայց այդ փորձն ևս ապարդիւք չը պսակվեց, և ստիպված եղան զինվորներ հանել և թաղել: Թիֆլիսից յանձնաժողովը մի շրջաբերականով դիմեց քահանայներին, հրաւիրելով նրանց գալ իրանց գանապանները ամենայն ազատութեամբ և առանց երկիւղի յայտնել: Բազմաթիւ հայեր, որոնք շտապով փախուստ էին տուել, թողին իրանց ապաստարանը, բայց հէց որ Մուշ եկան, նրանք բոլորն էլ կալանաւորվեցին զանազան պատուականներով և տարվեցին Թիֆլիսի հեռու անկիւնները:

«Սակայն նրանցից մի քանիսին աջողվեց փախչել և գալ ներկայանալ յանձնաժողովի եւրոպական գերեզմաններին: Նրանց տուած ցուցմունք-

ներից երևում է, որ հայերը մեղաւոր են այն բանում, որ մի փոքր զիմադրութիւն են ցոյց տուել թիւրքերի արշաւանքին: Նահանգապետ Թաքսինփաշա այդ բանը ապստամբութիւն համարեց և հրամայեց իր զինուորներին կոտորել հայերին: Ազգաբնակչութիւնը ապաւինեց Անդրը լեռան վրա, բայց երբ փաշան նրանց խոտաջաւ թիւրք զինուորների հովանաւորութիւնը, 300 անձինք, դրանց մէջ հաշուելով բազմաթիւ կանանց և մանուկներին, ներկայացան թիւրք գնդապետին, որը դրժելով իր տուած խօսքը այդ թշուառներին, հրամայեց կոտորել բոլորին և գցել տուեց նրանց զինվորները վերս յիշված փոսում»:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՎ ԵՒՐՈՊԱՎԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Ինչպէս երևում է, Չլքի-փաշայի հայ բողոքականները սաստիկ վրդովված են մի քանի հայ-կաթօնիկներին և մանաւանդ Աղաբեան պատրիարքին բռնած ընթացքից:

Թիւրք կառավարութեան Պարիզի օրդան «La Turquie» լրագիրը, հաղորդելով այն լուրը, թէ Չլքի-փաշայով կազմվել է մի ընկերութիւն հայ-բողոքականներից, որը ամբաստանում է հայ-կաթօնիկներին հայրենասիրութեանից զուրկ լինելու մէջ, աւելացնում է իր կողմից հետևեալը.

«Այդ զրպարտութիւն է: Կաթօնիկ հայերը, ինչպէս կամենում է ինքն պապը, ճանաչում են օսմանեան կառավարութիւնը և մերժում են միանալ այն մարդկանց հետ, որոնք կամենում են խռովութիւն սերմանել Թիֆլիսից: Այդ պատճառով յայտնում են իրանց հայրենիքը ուրիշներից աւելի շատ և չը պէտք է մոռանալ, որ բէնէդիկտեան վարդապետներն են, որոնք իրանց աշխատութիւններով պահպանել են Հայաստանի պատմութիւնը: Բայց հայ-կաթօնիկների պատրիարքը պարտաւորութիւն է համարում իր հօտին հնադանդութիւնը քարոզել և օրինաւոր իշխանութեան հպատակել, ինչպէս հրամայում է աւետարանը: Նա տալիս է կայսրերը կայսեր և Աւստրո-ունգարիայի Աստուծոն: Այդ պատճառով հայ բողոքականները զայրացած են նրա դէմ»:

Նախ շատ ծիծաղելի է, երբ մի թիւրք լրագիր խօսում է աւետարանի անունից. այս մէջ: Երկրորդ, կարող ենք հաւատալով օսմանեան ոսկիների համից կուրացած «La Turquie» լրագիրն, որ

սիրելում, որը եւս սովորում եմ հայոց միաբանութեան մէջ, ուր եւս գնում եմ ամեն օր դասեր վերցնելու մի հմուտ միաբանից և որտեղ եւս ստացել եմ շատ տեղեկութիւններ այդ արեւելեան ազգի գրականութեան և տօլորութիւնների մասին: Նրանք ունեն այստեղ մի եկեղեցի և միաբանութիւն՝ 90 անդամներից բաղկացած, որոնցից մի քանիսը շատ լուսաւորված և գիտական մարդիկ են: Նրանք ունեն մի տպարան և մեծ վանքեր են գործ դնում իրանց ազգը լուսաւորելու համար: Եւս գտնում եմ այդ լեզուն (որը երկու տեսակի է բաժանվում գրաբար և աշխարհաբար) դժուար, բայց ոչ անմատչելի»:

Բայց օրը ուղարկում է Մուրեթին մի քանի հատուածներ անգլիական-հայկական ընդհանուր թիւնից, հայերի համար կազմած, որ յետոյ վերջինս հրատարակեց: Բացի դրանից նա հետաքրքրվում է այն հարցով, թէ կան արդեօք հայկական տառեր և տպարան Օկսֆորդում, Կեմբրիջում կամ ուրիշ տեղ և իմանում է, որ մի քանի տարի առաջ երկու երկայր Ախտոնները հրատարակել են Հայոց պատմութեան մի ձեռագիր՝ լատիներէն թարգմանութեան հետ միասին:

Մի ուրիշ նամակում Բայրօնը գովաբանում է հայերի աշուտութիւնը, նրանց անձնութիւնը և կարգապահութիւնը և վերջացնում է մի քանի տողերով, որը հայ ազգի բարեկամները անկաս-

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՇԷՔՍՊԻՐ

(Լօնդոնի «Standard» լրագրի յօդուածը)

Մօսկվայի մեր թղթակիցը արդէն հեռագրով հաղորդել էր այն հետաքրքրական նորութիւնը, որ Շէքսպիրի գրուածքները թարգմանվում են հայերէն լեզուով:

Ներկայումս Արեւմտեան Եւրոպայի ուղադրութիւնը գրաւել են ծանր և վրդովնցող լուրեր՝ հայոց ազգի մասին: Ստոյգ են արդեօք այդ լուրերը թէ սխալ, կամ, որ աւելի հաւանական է, մասամբ ստոյգ և մասամբ սխալ. — այդ բոլորը թողնելով ապագային, մենք մի րօպէով կանցնենք քաղաքական աշխարհից դէպի գրական աշխարհը:

«Կօմպլիմենտը վերադարձնելու» նպատակով չէ, որ հայ բանասէրները Ռուսաստանում վճռել են ձեռնարկել անգլիական մեծ գրամատուրգի գրուածքների թարգմանութեանը, որովհետեւ թէ

Շէքսպիրը յիշատակում է Հայաստանը, բայց միայն, ինչպէս յիշում ենք, երկու տեղում՝ «Անտոնիոս և Կլէօպատրայի» մէջ, մի և նոյն տեսարանում: Խօսելով Անտոնիոսի մասին Յնգլարը ասում է. «Մեծ Միդիան, Պարթիան և Հայաստանը նա առեց Ալէքսանդրին»: Եւ մի քանի տող ներքե նա ասում է. «Ինչ որ եւս նուաճել եմ, մի մարդ նրան եմ տուել, ուստի Հայաստանում և ուրիշ նրա նուաճած թագաւորութիւններում եւս պահանջում եմ նոյնը»: Ուրեմն Շէքսպիրի էջերում էլ, ինչպէս երևում է այդ ակնարկներից, Հայաստանը, ինչպէս և այժմ՝ եղել է կոիւնների և վեճերի առարկայ:

Ինչ վերաբերում է Շէքսպիրի թարգմանութիւններին, կարելի է ասել, որ այն՝ ինչ հնարաւոր է Ֆրանսերի և գերմաներէն լեզուի համար, չէ կարող ներկայացնել մեծ դժուարութիւններ հայ բանասէրների համար, որոնց պատմական հռչակը թարգմանութիւնների մէջ՝ յայտնի է ամենքին եկեղեցու հայրերից:

Յայտնի է, որ միայն հայերէն թարգմանութիւնների չնորհիւ է, որ մենք տեղեկութիւն ունենք մի քանի կարեւոր հին գրուածքների մասին. և Գաւթիի աշխատութիւնը Արիստոտելի մասին մինչև այժմ էլ մեծ նշանակութիւն ունի գիտականների աչքում: — Ավստրիական բանաստեղծի

(Շէքսպիրի) սիրող երեակայութիւնը շատ դիւրին հասկանալի է արեւելեան ականջի համար: Բայց բաւական դժուար է հասկանալ, թէ ինչպէս մի ազգուցի ինքն, հիմնովին տարբեր հիւսիսային արեւմտեան ցեղերից, կարող է գնահատել «Համիտի» խոր և մասամբ մութ փիլիսօփայութիւնը: «Մակբեթ» մէջ ներկայացրած յանցաւոր փառաւորութիւնը, և «Օթելլոյի» ոգևորված նախանձը այնպիսի համամարդկային կրքեր են, որոնց ներկայացնելը ամբողջ աշխարհին մատչելի են: Շէքսպիրի պատմական պիէսները նոյնպէս կարող են հետաքրքրել մի հին ազգութիւն, որը քանի նրա վիճակը հետզհետէ վատթարանում է, սպասում է Անգլիայից համակրութիւն և օգնութիւն:

Հայոց լեզուն բարձր նշանակութիւն ունի ֆիլոսոֆիայի աչքում թէ չնորհիւ իր հնութեան, իր ճշմտութեան և ճկունութեան, և թէ այն գերական հարստութիւնների, որ նա ներկայացնում է:

Անգլիացի առաջնակարգ և ամենաժողովրդական բանաստեղծը խօսում է դրա մասին իր գրուածքներում: «Եւս ձեզ գրեցի անցեալ շաբաթ, ասում է Բայրօնը, վենէտիկից Մուրեթին գրած իր նամակում (1816 թ.), և այս անգամ քիչ բան ունեմ աւելացնելու. բացի նրանից, որ եւս սկսել եմ բաւական առաջ գնալ հայերէն լեզուն ուսումնա-

միայն բնէնդիտեան վարդապետները չեն պահպանել հայոց պատմութիւնը. երրորդ՝ Ազարեան պատմաբանը ղեկն հայերը զբոսնում են ոչ թէ նրա համար, որ նա ճարտար է տալ զվայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյն, այլ որովհետեւ նա քաղաքացի է ճշմարտութիւնը ծածկել, յանցանքը և ոճիրը անպատիժ թողնել, սուտ խօսել, և ժողովրդի շահը գոհում է իր փառասիրութեանը:

Ուր էր, թէ հայ-կաթոլիկ և նոյն իսկ հայ լուսաւորական հոգեւորականութեան մեծամասնութիւնը միայն հետեւէր աւետարանի այդ մեծ պատուէրին՝ «տալ զվայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյն»:

II

Նոյն իսկ «Բէյութերի գործակալութիւնը», որ յայտնի է իր թիւրքաւէր ուղղութեամբ, հաղորդում է անգլիական լրագրներին հետեւեալ մարտի 11-ից. «Գարաիսարում, որ գտնվում է Սիվասի վիլայէթի շրջանում, տեղի են ունեցել խառնակութիւններ. նոյնպիսի խառնակութիւններ տեղի են ունեցել և երեք ամիս սրանից առաջ: Հայերի մի մեծ թիւ սպանված է և վիրաւորված»:

III

«Բէյութերի գործակալութիւնը» վիճանայից հեռացրում է մարտի 14-ից հետեւեալը. «Երեք ամիս սրանից առաջ Ամասիայում բանտարկւելիցին 150 հայեր, որոնց մեղադրում էին յեղափոխական դաւադրութեան մէջ: Այն օրից, երբ հրատարակվեց սուլթանի իրադէն, որով ներումն էր շնորհում քաղաքական բանտարկեալներին, Ամասիայի նահանգապետ Բեքիր փաշան արձակեց 50 մարդ և թողեց դարձեալ 100 մարդ բանտում, միայն նրանց դրութիւնը լաւացրեց: Բանտի սենեակները, որոնք գտնվում են անառողջապահիկ պայմաններում և բանտարկեալները, որոնք մինչև այն ժամանակ ենթարկվում էին բազմաթիւ տանջանքների, աւելի լաւ պայմանների մէջ դրվեցին»:

IV

Կ. Պոլսից նոյն «Բէյութերի գործակալութիւնը» հեռացրում է անգլիական լրագրներին մարտի 17-ից հետեւեալը.

«Անգլիայի դեսպան Ֆրիլպպ Կերրին Բարձր Դրան ուղարկութիւնը դարձրեց այն երկրի վրա, որի մէջ ապրում են փոքր Ասիայի քրիստոնեաները: Դեսպանը ստացել է թիւրք կառավարութիւնից անհեղինակութիւն, որ միջոցներ են ձեռք բերելով ապստամբութեան քրիստոնեաների դրութիւնը: Բարձր Դուռը նոյնպէս տեղեկացրել է ամերիկական դեսպան Քերրեյին, որ յիշեալ բովանդակութեամբ հրամաններ են ուղարկված փոքր Ասիայի նահանգապետներին»:

«Կ. Պոլսում կաշանաւորւելիցին 40 հայեր, որոնք մեղադրվում են այն բանում, որ մասնակցում են եղել մի ժողովարարութեան՝ յօդուտ Աստուծի վնասվածներին»:

V

Արտաքին գործերի ստատ-սեկրետարի օգնական Գրէյ այս օրերս յայտնեց անգլիական համայնք-

ների ժողովում, որ հայոց հարցի համար կազմված միջազգային քննիչ յանձնաժողովի բրիտանական անդամից մինիստրութեան մէջ ստացված տեղեկութիւններից երևում է, որ վանի թիւրք նահանգապետը շատ թշնամաբար է վերաբերվում դէպի վանի նահանգում ապրող հայերը և առհասարակ դէպի քրիստոնեաները: Այդ պատճառով Կ. Պոլսի բրիտանական դեսպանին հրաման է տրված առաջադրութիւններ անել այդ առիթով Բ. Դրանը: Սակայն այն տեղեկութիւնը, որ իբր թէ նահանգապետը սպառնալիքներով ճնշում էր գործ դնում վրականների վրա, դեռևս չէր հաստատուել, թէպէտ և այդ տեղեկութիւնը յանձնաժողովը ի նկատի ունի: Այն տեղեկութիւնը, թէ 2,500 մինչև 3000 հայեր բանտարկված են քաղաքական շարժառիթներով՝ ըստ երևոյթի, կը ճշդվի, և այդ պատճառով նոյնպէս առաջադրութիւններ կանվեն Բ. Դրանը:

VI

Անգլիական «Standard» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ Բ. Դուռը ընդունեց Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի պահանջը և թող թուեց քննիչ յանձնաժողովի գլխավորներին, որ իրանք ընտրեն իրանց համար մի թարգման: Այդ պատճառով, Էդուարդ ֆրանսիական հրապարտարանի թարգմանն ընտրվեց այդ պաշտօնի համար և նա անմիջապէս Մուշ կերթալ թիւրքաց պահանջաւորի ուղեկցութեամբ:

VII

Ֆրանսիական «Paris» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ Հայաստանի անցքերի պատճառով Բ. Դրան դժուար կացութիւնը ի նկատի ունենալով, նախկին սուլթան Մուրադը աշխատում է դժգոհութիւն յարուցանել ժողովրդի մէջ թիւրքիայի այժմեան կառավարական ձևի դէմ:

VIII

Հռոմից «New-Iork Herald»-ին գրում են. «Այստեղ գնաւորան մեկնութիւնների առիթ տուեց «Daily Telegraph» լրագրի թղթակցի հեռագիրը Կարսից, հայկական կոտորածի մասին: Ես երբեք գնացի թիւրքաց դեսպանի մօտ հարցնելու նրա կարծիքը այդ թղթակցութեան մասին: Մահաւոր Նեղիմ բէյը պատասխանեց հետեւեալը: «Ես կարծում եմ, որ ամբողջ պատմութիւնը կեղծ է (ուրիշ է՝ պէտք է ասել թիւրք կառավարութեան ներկայացուցիչը), պարունակելով իր մէջ շատ միամիտ շարադրութիւններ, կամ ճիշդն ասած՝ մի կրկնութիւն նոյնատեսակ շարադրութիւնների, որ արդէն լոյս են տեսել անգլիական լրագրներում դեռ երեք ամիս սրանից առաջ»:

«Եւ որ այդ այդպէս է, ապացուցվում է ոչ թէ խօսքերով, այլ դոկումենտներով, որոնք լոյս տեսան նոյն իսկ «Herald» լրագրում: Այժմ ունենք և մի ուրիշ հերքում անգլիական թերթերի կողմից, որը ցոյց է տալիս, թէ թղթակցից չէ կարող նոյն իսկ Հայաստանում եղած լինել: Ես չեմ կարող ասել, որ դա ճիշդ է թէ ոչ, որովհետև չունենմ պատշտօնական ծանուցում: Բայց եթէ կայ

սակաւները) թէ Տաճկաստանի փաշաները հաւատարապէս աւերել են այն երկիրը, որտեղ Աստուած տեղեկեց մարդուն իր անձի նմանութեամբ»:

Այն վանքը, որտեղ Բայրօնը պարսպում էր, այժմ էլ գոյութիւն ունի: Թէ ինչ կարող են անել հեղինակները, մանաւանդ բանաստեղծները ճշնված ազգութիւնների և հաւածված ցեղերի համար, այդ չափադանցներու կարիք չը կայ: Այսօրվայ Խալիփան իրովին պարտական է նոյնքան Գանտէին և Պետրաքային, որքան և Վիկտոր-Էմանուէլին, Կալուրին, Գարիբալդին, Մաձինին և այն բոլոր նահատակներին, որոնք իրանց կեանքը դրին նրա միութեան գործի համար:

Բայրօնը ինքը մեծապէս նպաստեց այն համակրութեանը, որ առաջ եկաւ դէպի յունաց ազատութեան գործը, իր վշտալից և ոգեւորված երգերով:

Եւ չափազանցութիւն չի լինի ասել, թէ նրա բանաստեղծութիւնները, և «Գոն ժուանի» գեղեցիկ երգը «Յունաստանի կղզիները» վերնադրով, ունեցաւ Տիրաքիի երգերի ամբողջ գորութիւնը Յունաստանի շղթաները փչրելու համար:

Մի ազգութիւն, որ կարող է սիրել Շէքսպիրին և հասկանալ նրան, կը ղշնակէ արդէն մեծ քայլ իր երբեք ազատութեան արժանապաւ համար, և եթէ նոր ձեռնարկած թարգմանութիւնը այդպիսի հետեւանք ունենայ, հայերը ստացած կը լին-

էլ մի թղթակցից, յամենայն դէպս նա Մուշում չէ գրում է միայն հայերի կողմից, հայկական աղբիւրներից, ասել է թէ հայկական յեղափոխականների տուած տեղեկութիւնների հիման վրա: Դա մի կրկնութիւն է այն ստույգութիւնների, որ պարբերաբար լոյս են տեսնում թիւրքերի մասին:

«Ինչ վերաբերում է այն 330 հայերին, որոնք անձնատուր են եղել և որոնց իբր թէ կառավարութիւնը մահաւան է դատաւարտել, դա աներեւակայելի մի բան է, որին ես ինքս, եթէ աչքովս անդամ տեսնէի, չէի հաւատայ (!), ինչպէս որ անգլիացին կամ ամերիկացին չէր հաւատայ, եթէ իր կառավարութեան մասին այդ բանը ասվէր: Թիւրքիան միայն արդարութիւն է պաշտպանում և դէմ է յեղափոխութեան ու անարիւնիքի:

«Որ այդ բոլորը ազդեցութիւնների գործ է, դրա մասին ապացուցներ (??) ունենք: Ինձ մօտ է հայկական հայրենասէրների ընկերութեան անգլամ Բ. Փալապիանի գրուածքը, որ տպված է «L'Union» թերթում այս յունվարի 14-ին, Բուխարեստից քշվելուց յետոյ:

«Այս տեսակ ծրագրիւնների հրատարակութիւններից յետոյ, ասաց դեսպանը, որ կառավարութիւնը թող կը տայ այդ տեսակ հայրենասէրներին գործելու լեւոյսացիները չեն ձանաչում մեզ՝ թիւրքերիս և թիւրք կառավարութիւնը: Նրանք խօսում են հայերի հայրենասէրների մասին, մինչդեռ չը գիտեն, որ թիւրք բարձր պաշտօնեաների մի քանակը գոյեւ բաղկացած է հայերից: Սուլթանի գանձապահը հայ է, արտաքին գործերի մինիստրի օգնականը հայ է և այդ մինիստրութեան մէջ 15 հոգուց աւելի հայ կայ, պետական խորհրդում հինգ հայ, երկրագործութեան, հանքերի, առետրի և հասարակական շինութիւնների գլխաւոր վարչութիւններում 13 հայ կայ, արդարադատութեան առեւտրում 11 և այլն: Այստեղի իմ դեսպանատան առաջին քարտուղարը հայ է. նոյնպէս և առաջին քարտուղարները Պարսկում և Բելգիայում»:

Ան այս տեսակ յողուածներով, և թիւրք դեսպանների ցուցմունքներով է ուղում հերքել «New-Iork-Herald» լրագրի Հայաստանի թշուառ վիճակը...

ԹԻՒՐԿՈՍ ՈՍԽԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍԿԻ ՅԱՅՏՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Գերմանական «Berliner Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակցիցը մի հետաքրքիր խօսակցութիւն ունեցաւ թիւրքաց ոստիկանութեան մինիստր Նազիմ փաշայի հետ, հայոց ազդեցիկ մասին:

«Նազիմ փաշայ խօսքով, հայոց հարցի մասին ճիշդ տեղեկութիւններ կիմացվեն միայն մի քանի ամիսներից յետոյ, և այն ժամանակ ամբողջ Եւրոպան ապշած կը մնայ, որ այդքան համակրութիւն էր ցոյց տրվում այնպիսի մարդկանց, որոնք ձգտում էին անարիւնի յաղթանակներ: Եւ յիշուի, Լոնդոնում, Մարսելում և Ամերիկայում

ենն ոչ միայն նոր մտաւոր բուսականութիւն, այլ և դրական վերակենդանութիւն ազգային կեանքի: Մի և նոյն ժամանակ լաւ կը լինի, որ հայերը յիշեն, որ թէ և Գանտէին, Շէքսպիրը, Բայրօնը կարող են նպաստել մի ազգի ազատութեանը, նրանք չեն կարող սակայն ստեղծել այնպիսի առաքինութիւններ, որոնք դարձնում են ազատութիւնը՝ ճշմարիտ ազգային մեծութեան հիմք: Այն սերմերը, որ նրանք կարող են ցանդել, պտուղներ կը տան միայն նպաստաւոր հողի վրա:

Մենք կարծում ենք, որ եթէ «Divina Comedia»-ի հեղինակը կարողանար նորից գալ այս երկիրը, նա կը գտնէր իր գոփաւումը նոր պատիժների չըշնանումը՝ արդի խալիփան մի քանի քաղաքագէտների համար, և եթէ Բայրօնը կարողանար դարձնել և ներկայ գտնվել Միասօցնգում, նա ստիպված կը լինէր նորից գրել այնպիսի մի զայրոյթով և կրքով լի երգ, ինչպէս այն երգը, որտեղ նա բացականչում է. «ստուգների երկիր երեք չի լինի իմ երկիրը, —այդ գիցի քո Սամոսի գիւնու բաժակը»:

Նոյնը կարելի է ասել և Շէքսպիրի մասին. — միայն այն ազգութիւնները կարող են գրաւել նրա համակրութիւնը, կամ արժանի են տալ նրա անունը, որոնք այնպէս խոհեմ են և բազմակողմանի, ինչպէս նա ինքն էր:

Յ. Քոչարեանց

մեքենայութիւններ լարող «Հնչակեան» մասնա-ժողովը ամենին չէ աշխատում հայերի վերածնութեան գործի համար, այլ կործանում է նրանց իր անարիւնական վարդապետութիւններով: Իսկ հայերից նրանց, որոնք հաւատարիմ են մնում իրանց կառավարութիւններին, մասնաժողովի անդամները մահվան պատժի են դատաւարտում: Վերջին վից տարիներին ընթացքում, «Հնչակեան» կուսակցութեան հրամանով, սպանված են մօտ հազար հայեր, և դոհերի անունները յայտնի են թիւրքաց կառավարութեանը:

«Ապա մինիստրը մի քանի մանրամասնութիւններ հաղորդեց հռչակ ստացած Համբարձում Բոյաճեանի մասին, որը մեծ դեր է խաղում Սասունի անցքերում: Եթէ հաւատալ մինիստրին, վեց տարի առաջ Համբարձումը յանցաւորների խմբի անդամ էր Կ. Պոլսում: Երկու տարուց յետոյ նա ընկերների հետ ապստամբութիւն յարուցեց Գուս-Գաբրիւում և ապա սպանեց երիտասարդ հայ փաստաբան Խաչիկ Էֆենդիին, որովհետեւ այդ վերջինը հրաժարվեց մասնակցել անարիւնական մեքենայութիւններին: Վերջը նա սպանեց երկու քահանաներին և ապա փախաւ Ժընէվ, ուր այն ժամանակ գտնվում էր Խաչիկը, և ապա Աթէնք: Այդտեղից նա, թիւրքի չոր հագած և Մուրադ անունով գնաց Անատոլիա, ուր հանդիպեց իր եղբոր՝ Ժիրայրին: Այդ երկու եղբայրները յեղափոխական շարժում առաջացրին իրանց հայրենիքում, բայց չարժուր ճնշվեց և նրանք փախան: Ժիրայրը, սակայն, չուտով կաշանաւորվեց և մահվան պատիժը կրեց, բայց Համբարձումը շարունակեց իր ազդեցիկ նախ Մուշում, ապա Երուզրէի մէջ, և, վերջապէս, կրկին հայերի մէջ: Վերջիններին նա հաւատացնում էր, որ նրանց կարող են յոյս դնել Անգլիայի վրա: Այս անգամ սակայն, աշդովեց կաշանաւորեւ Համբարձումին և նա իր պատիժը կրեց դահձե-ձեռքից»:

Առաջ բերելով Նազիմ-փաշայի կարծիքները, չենք կարող մասնաւոր չանել այն բանի վրա, որ թիւրքաց կառավարութիւնը այժմ դիմում է մի նոր խորամանկութեան, եւրոպական կառավարութիւններին թիւրքաց հայերի շարժման դէմ զրգուելու համար: Թիւրքաց կառավարութիւնը, որ մինչև այժմ հաւատացնում էր թէ հայերը երջանիկ են թիւրքիայում, այժմ տեսնելով որ ոչ ոքի չը կարողացաւ խաբել, սկսել է Նազիմ-փաշայի բերանով հաւատացնել, որ հայոց շարժման նպատակը խմբերը անաւրիս իստան են:

Սակայն ով կը հաւատայ:

ՀԱՅԵՐԻ ՏՈՒՄ ՈՒՎԵՐՁՆԵՐ

Լոնդոնի «Daily News» լրագրի հրատարակելով այն շնորհակալական ուղերձների պատճենը, որ Եւրոպայում ապրող հայերը ուղղել են Անգլիայի և Ամերիկայի հասարակութիւններին, իր կողմից ասում է հետեւեալը.

ԹԻՒՐԿՈՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱՍԻ ՄԱՍԻՆ

Այս տարվայ սկզբից, ինչպէս իր ժամանակին հաղորդեցինք «Մշակի» մէջ, Պարսկում սկսվել է հրատարակվել «La Turquie» անունով մի շաբաթաթերթ, որի ձախաթին տպված են հետեւեալ բառերը. «Ուսմանական կայսրութեան շահերի յատուկ օրդան»:

Իր այդ պաշտօնական օրդանի մէջ թիւրքաց կառավարութիւնը այս օրերս տպել է Սասունի կոտորածի պատմութիւնը իր ձևակերպութեամբ: Մենք առաջ ենք բերում ամբողջապէս, առանց փոփոխութեան այդ յօդուածը, որպէս զի մեր հասարակութիւնը գաղափար ունենայ, թէ այժմ թիւրքաց կառավարութիւնը ինչպէս է պատճառաբանում այն սոսկալի կոտորածը, որ այսքան աղմուկների պատճառ եղաւ:

«Կէս—թափառական Միքաէլի և Խիսիի քիւրք ցեղերը, որոնք բաղկացած են գրեթէ 2000 ընտանիքներից, անյիշատակ ժամանակներից ի վեր ըլլալ խաշնարած ժողովուրդներին յատուկ սովորութեամբ, միշտ փոփոխում են իրանց բնակութեան տեղը տարվայ եղանակներին համաձայն: Ձմեռը նրանք բնակում են Գիարբէքերի վիլայէթի դաշնաւում, ամառը նրանք բարձրանում են Մուշ քաղաքի և Տաւրօրիկ գիւղի մէջտեղ դըսնված սարերի վրա և անցնում են այդ երկրից յիւրեանց հայ գիւղերի մէջով:

«Այդ ցեղով և կրօնով սարբեր ժողովուրդները

«Մենք այսօր հարապատեցանք հերթականին՝ և Ամերիկայի ժողովուրդներին ուղղած շնորհակալութեան ուղերձները, որ գրել են Վաշինգտոնի մօտ 3000 հայերը այն համակրութեան առիթով, որ այդ երկու ազգերը ցայց են տալիս փոքր-Ասիայի տանջված հայ ժողովրդին: Այդ երախտագիտական ուղերձը մի և նոյն ժամանակ արդարացի յոյս է տալիս, որ շուտով օգնութիւն ցայց կը տրվի: Այս կէտը չեղարկած է նոյնպէս այն խնդրագրի մէջ, որը Հնդկաստանում և Կոլոմբիաներում բնակվող թագուհու հայ հպատակները, ինչպէս և ներկայումս Եւրոպայում և Միացեալ-Նահանգներում ճանապարհորդող հայերը, ներկայացրել են պարլամենտին, ասելով որ այդ յոյսը առաջին անգամ արժարժեւ է 16 տարի առաջ Բերլինի դաշնագրերը:

«Երկար ժամանակ պէտք չեղած համոզվելու համար, թէ անհրաժեշտ է իրազեկել խոստացած բարենորոգութիւնները: Եթէ վերջին ժամանակ պատահած դադանութիւնները աւելի վաղ կատարված լինէին, մենք աւելի վաճառեալ միջոցների կը զիմէինք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՐՈՂՆԵՐ ՄԵՐ ԵԿԵԼԵՑԻՆԵՐՈՒՄ

Մեն պատի մէջն ենք, և կիրակի օրերը Թիֆլիսի համարեա բոլոր եկեղեցիներում քարոզներ են լինում:

Քարոզում են ամենքը, քարոզում են ամեն բան: Քարոզում են այնպիսի քահանաներ, որոնք իրանց կանգնում ունին չեն սովորել. քարոզում են այն ժողովրդիկ, որ իրանցից շատ բան գիտէ: Երեւի մեր քահանաները այնպէս են կարծում, որ քարոզելու համար բաւական է քահանայ լինել: Նորանք մոռանում են, որ քարոզելու համար կրթութիւն և զարգացում է հարկաւոր, և դեռ այդ էլ քիչ է,—քարոզելու համար չնորժ է հարկաւոր, ձիրք է հարկաւոր:

Երկվայ տգէտ տիրացուն, այսօր իրան քահանայ տեսնելով՝ առանձին է կանգնում՝ ժողովրդին քարոզելու: Նա, որ իր միտքը կանոնաւոր կերպով չէ կարողանում յայտնել, ուզում է քարոզել լինել: Քարոզի նշանակութիւնը չը հասկանալը այնտեղն է համար, որ տիրացուարանի աշակերտն էլ, իր դասերը թողած, քարոզ է խօսում:

Եւ ինչ են քարոզում դրանք մեծ մասամբ. կամ աւետարանի առակներ են պատմում ուղիղ այնպէս, ինչպէս գրված է կրօնի դասագրքերում, կամ ժողովրդական առակներ ու ճիւղերով, կամ հենց այնպիսի բան, ինչ որ չէ կարող քարոզի նիւթ լինել: Եթէ մի մի նմուշ բերելու լինենք այդ զանաք քարոզներին, մի ծածկելի բան դուրս կը գայ, և գոց է միամիտ ընթերցողը դժուարանայ հաւատալ: Եւ այդ բոլորը տեղի է ունենում կովկասի մայրաքաղաքում...

Հետաքրքրութիւնից զրդված, շատ տարիներ, մեծ պատիւ չի վերցրել Թիֆլիսի հայոց եկեղեցի-

ները, բայց միշտ անխորժ տպաւորութեան տակ ենք դուրս եկել: Մեզ համար միակ միջոցաւորականը այն է եղել, որ երբեմն երբեմն լսել ենք մի քանի կրթված քահանաների քարոզները, այն է՝ հանգուցեալ Սարգիս քահանայ Բեքազարեանցի, Արսէն քահանայ Բաղրատունու, որ շատ էլ եռանդ չունի քարոզելու մէջ, և էմանուէլ քահանայ Նաղարեանցի քարոզը: Նաղարեանց քահանան իր քարոզները սկսեց դեռ սարկաւազ ժամանակից և Հալաբարի ժողովուրդը նրա չնորհիւ լսեց այնպիսի քարոզներ, ինչպիսին նա ամենեւին չէր լսել և կարելի էր լսել միայն կրթված և ձիրք ունեցող քահանայից:

Մի նկատողութիւն ևս.—միանգամայն ցանկալի է, որ մեզանում սովորութիւն դառնայ, որիչ լուսաւորված աղբերի պէս՝ ամեն կիրակի քարոզելը, քանի որ տարվայ 365 օրվայ մէջ միայն 5 օր քարոզելով՝ ոչինչ առաջ չի գնայ: Տարաբաղաբար, Հալաբարի ժողովուրդը, նոյն իսկ բուն քաղաքի ժողովուրդն էլ, սովոր չէ և հեշտ չի սովորի ամեն կիրակի քարոզ լսելուն, քանի որ նա աչքը բաց է արել և միայն մեծ պատի կիրակի օրերն է քարոզ լսել: Մեր կարծիքով, շատ լաւ կը լինէր, որ ձեռնհաս քահանաները քարոզէին մշտապէս քաղաքի յայտնի եկեղեցիներում:

Ու.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Մարտի 7-ին

Տասն օր է արդէն, որ ամենայն հայոց կաթողիկոսը Նոր-Նախիջևան է: Եւ այդ ժամանակաւ միջոցում մի քանի հազար մարդիկ բազմ ունեցան տեսնելու վեհափառին: Առաջին օրերը հերթով ներկայանում էին հոգաբարձուները, երէցփոխները, տեղական զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչները, այժմ առանց հերթի հասաւ բոլոր ժողովուրդը գալիս է տեսնելու:

Վեհափառը մանրամասն ծանօթանում է բոլոր տեղական հիմնարկութիւնների կազմակերպութեան և նպատակների հետ. նա յորդորում է բոլորին ծառայել գործին անկեղծ սիրով, և յանկարծ, ազգու խօսքերից յետոյ, անում է սրամիտ նկատողութիւններ: Սակայն պատահում է, որ ներկայացուցիչներից մի քանիները մոռանում են, որ մեր եկեղեցու պետը մեր հիւրն է և հակառակ հիւրասիրութեան ամենապարզ կանոնների՝ դիմում են անտեղի և անվայել խնդիրներով: Օրինակ՝ համար հայ կանանց ընկերութիւնը դիմում է աղքատագրով, որպէս զի... քահանայ Գանձապետեանին վեհափառը կարկաղաբ չնորհէ...

Կարելի էր կարծել, որ Նոր-Նախիջևանի կանանց միակ պակասութիւնը է... քահանայ Գանձապետեանի կամիլակայ չունենալը: Նոյն տեսակ աղերսագրով դիմել է ամենայն հայոց կաթողիկոսին մէկ ուրիշ քահանայի համար պ. Զ.: Բարեբաղդաբար այդպիսի դէպքերը դեռ քիչ են և յուսանք, որ չեն կրկնվի:

և պատմեց անցը: Քիւրդերը խմբովին ոտքի կանգնեցին՝ Մօլլա Բասուրի սպանողներին պատժելու համար: Նախ քան իշխանութիւնը հնարաւորութիւն ունենալ ֆիդիկայեւ հարկաւոր միջոցները ձեռք առնել կուրք խափանելու համար, քիւրդերը դիմեցին Տալուրիկ:

«Այդ գիւղը, որ բաղկացած է 7 թաղերից, մօտ 2,000 տուն բնակիչ ունի. նրա բնակիչները հայեր են և իրանց ապրուստը ձարում են մատակարարելով չրվակայ թափառական քիւրդերին նրանց ուտելիքը: Այդտեղ մի կուր ծաղեց հայերի և քիւրդերի մէջ, որոնք եկել էին նրանց վրա յարձակվելու նպատակով և այդ կուրի մէջ սպանվեցին բազմաթիւ մարդիկ: Հայերը, գրգռվելով մի միմիկ Տալուրիկի կողմից, թողեցին Տալուրիկը և իրանց ընտանիքներով ապաստանեցին Անդոզ սարի ժայռում և մնացաւ տեղիւրում. այդ սարը գտնվում է այդ գիւղի և Սասունի կաղաքի մէջտեղում:

«Մուստաֆա էֆենդի բինբաշին (հազարապետը) ուղարկվեց երկու հետեակ զօրաւորով կարգը վերահսկողութիւն համար, և ար քիչ ժամանակից յետոյ մարշալ Զաքի փաշան ուղարկեց իր թիւնապաշ Բաշիր-բէյ մայորին, հայերին խաղաղացնելու համար: Այդ պաշտօնեան աջողութեամբ կատարեց իրան յանձնված միտքան. հայերը վերադարձան իրանց գիւղերը: Տալուրիկն մնալով մենակ՝ սարերում, ձերբակալվեց մի ժանդարմի ձեռքով և ուղարկվեց Պոլս:

Առաւօտից մինչև երեկոյ Գ. Կրասնիկեանի ահազին տունը լի է բազմութիւնով: Առաջին օրերը վեհափառը, փոքր ինչ միտած ճանապարհին, թոյլ էր բաւականին, բայց փոքր առ փոքր այդ թուրքները անցնում է, և նա կարողանում է ամենքին ընդունել:

Կիրակի օր, ոչ ոքին չիմացած՝ երկրի կառքով վեհափառը եկաւ Լուսաւորիչ եկեղեցին: Իսկոյն բարձրացաւ աղմուկ. մէկը տաքանում է, թէ ինչիւ վեց ձի չեն լծած, միւսը բարկանում է, թէ ինչիւ կարմիր մահուր չէ փռած եկեղեցու բաղը, երրորդը զարմանում է, թէ ինչիւ բոլոր եկեղեցիներինք քահանաները ժողոված չեն և ինչու քահանաների դասը չէր սպասում դրանք և այլն և այլն: Ինչ վերաբերում է մեզ, մենք ուրախ էինք, որ վեհափառը արտաքինի վրա ուշադրութիւն չէ դարձնում: Եւ չը նայելով, որ վեհափառը երկրի կառքով եկաւ, կարմիր մահուր չէր փռած բաղը և քահանաները չէին սպասում դրանք, նրա արտասանած ձառը չը կորցրեց իր արժէքը. դա պարզ, ազգու քարոզ էր, ճոխ պարունակութիւնով, գեղեցիկ իր ոճով և լաւ տպաւորութիւն արեց բոլորին վրա:

Գ. Զ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Փետրվարի 20-ին

Գիտնականներից մէկը ժողովրդի առաջադիմութիւնը, ի միջի այլոց, չափում է նրանով, թէ նա որքան սապին է գործածում: Եթէ նոյն միջոցով չափելու լինենք մենք Ագուլիսի հայ հասարակութեան առաջադիմութիւնը, կը գտնեք շատ տխուր երկարացութեան և ստիպված կը լինենք նրան դասելու կիսավայրենի ազգութիւնների շարքում: Սակայն ընթերցողները գոց է այդպիսի գաղափար չունեն մեր կովկասի ամերիկացիներին(?) վրա, ինչպէս անուանում էր նրանց հանգուցեալ Բաֆֆին: Ընդհակառակը, նրանց շատերը ճանաչում են իբրեւ վաճառական ժողովրդի, որին կարելի է գտնել և Սօսկվայում, և Կալիֆորնիայում, և Մարսելում և Ստաթախում, թէ լուսաւոր եւրոպայում և թէ խաւար Ասիայի և Աֆրիկայի խորքերում (այժմ մինչև իսկ հարաւային անդլակայն կոչվելայում մի զոկ արհեստաւոր կայ): մէկ խօսքով երկրագնդի ամեն մի անկիւնում կարելի է հանդիպել ազգուցեցուն և ամեն տեղ յայտնվել է նա իբրեւ խելօք և մինչև անգամ առաջադէմ տարի:

Այդ բոլորը վիճելի հարցեր լինելով, մենք մի կողմ ենք թողնում, միայն այդանքը կանենք, որ ազգուցեցին իր հայրենիքում բոլորովին հակապատկեր է այն բանին, ինչ որ է ուրիշ տեղում: Ստատիստիկան մէջ նա հետևում է կենսաբան, մասնակցում է ամեն մի հասարակական գործին և այլն, իսկ հայրենիքում նա միանգամայն անհետաքրքիր և անտարբեր է դէպի ամեն մի երևոյթ: Մասնաւորելով մեր խօսքը ազգուցեցիների մաքրասիրու-

թեան վրա, պիտի խոստովանենք, որ դրանում նրանք սաստիկ յետադիմում են. ազգուցեցին տարով բաղնիք չի գնայ և կարծես թէ պահանջ էլ չէ զգում դրանում. համարձակ կարելի է ասել, որ իւրաքանչիւր ազգուցեցի տարին քառորդ ֆուտ սապին չի գործած իր վրա: Սրանք կարծես թէ չեն հասել այն մտքի, թէ մարդու կաշի մաքրութիւնը առողջապահական տեսակետից նոյնքան հարկաւոր է, որքան և լաւ ուտել լսելը, լուսաւոր սենեակները, և տաք մուշտակ ու վերարկուները: Յետ չը մնալով ամեն մի շուալ բանից, ազգուցեցին մոռացութեան է տուել կենսաբան համար մի այդպիսի կարեւոր բան, ինչպիսին է բաղնիքը:

Ներկայումս այստեղ կայ մի ընդհանուր բաղնիք, որի յաճախորդները կազմում են գրեթէ ամբողջապէս թիւրքերը: Եւ որ խելքը գլխին ազգուցեցին կը գնայ այնտեղ, քանի որ գնացողը երկրի է կրում մրսել և ստանալ թոքերի բարբառում կամ բերել զանազան տարափոխիկ հիւանդութիւններ: Բաղնիքը բուն թիւրքական ճաշակով է շինված և չունի ոչ մի յարմարութիւն, կեղտոտ է, ցուրտ և ապակայնված: Մշտապէս այնտեղ բուրում է մի անտանելի գարշահոտութիւն: Այդպիսի այնպարմարութիւններ աչքի առաջ ունենալով, մարդ մի անգամ գնալով, միւս անգամ այլ ևս չէ վստահանում ոտ դնել այնտեղ: Արդեօք ժամանակը չէ մտածել մի նոր, օրինաւոր բաղնիք կառուցանելու մասին:

Ներկայ տարվանից սկսած մեր գիւղական վաւաղ անարմիները ենթարկվեցին նշանաւոր փոփոխութիւնների, որոնք իրանց յայտնի ազգուցեցիները կունենան գիւղական կենսային վրա: Յայտնի է, որ առաջ ամեն մի գիւղ ունէր իր առանձին տանուտէրը, շինական դատարանը և դատաւորները: Այժմ յարմար է դառնում վերացնել տանուտէրների պաշտօնը և շինական դատարանները ամեն մի գիւղում և մի քանի գիւղեր ենթարկել մի տանուտէրի իշխանութեան: Դատաւորները և նրանց անձնափոխանորդները ընտրվում են զանազան գիւղերից: Կենտրոն համարվում է այն գիւղը, որտեղ է տանուտէրը: Դրանց բոլորին առ այժմ նշանակում է կառավարութիւնը: Տանուտէրի և բոլոր կառավարչական ծախքերը հոգում է ամբողջ շրջանը: Դատաւորների պաշտօնավարութիւնը ձրի է: Վերին-Ագուլիսը համարվում է կենտրոն մի շրջանի, որի մէջ մտնում է 15 համայնք կամ մօտ 670 ծախ: Կան գիւղեր, որոնք կենտրոնից գտնվում են մօտ 15—20 վերստ հեռաւորութեան վրա, ինչպէս են Կարձնան, Գիլիթ և այլն, ուստի այդ հանգամանքը շատ պիտի դժուարացնի գիւղացիների գործը դանդաղանքի ժամանակ:

Ա. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 17-ին

Ամսիս 5-ին, Թիֆլիսի հոգեւորականների ապա-

կական վիճակի մէջ զգացին, որովհետեւ իրանց ետեից ունէին Սասունի այն քիւրդ գեղերը, որոնք գրեթէ դեռ նուաճված չեն և աւելի կռապաշտներ են համարվում, քան միաբնակներ են և որոնք յարձակվեցին հայերի վրա, իսկ առաջից իրանց դէմն ունէին կանոնաւոր զօրքը, որի հետ կուում էին: Հաղարից աւելի հայեր կորան այդ պատերազմի մէջ: Կուր միւս օրը, մարշալ Զաքի-փաշան, որ եկել էր այդ տեղերը երգնկայից, չորս օրվայ ընթացքում 300 քիւրդ մէտը ճանապարհ գնալով, հարկադրեց ցանուցիլ եղած հայերին վերադառնալ իրանց օջախները. նա կարողացաւ համոզել նրանց, ապահովեցրեց այն ընտանիքների պահպանութիւնը, որոնց զբաղաւորները սպանվել էին և ամեն վնաս գործըրեց երկրը խաղաղացնելու համար: Մուրադը, որ 25 ընկերներով պատուաւարվել էր մի քարանձաւի մէջ, ստիպվեց անձնատուր լինել. նրան ուղարկեցին Թիֆլիս իր ընկերներին հետ, առանց որ և է նեղութիւն տալու:

Այս այս է փոքր-Ասիայի դէպքերի հաւատարիմ և ստուգված պատմութիւնը, որից անգլիական լրագրիները և եւրոպական դիպլոմատիան այնքան մեծ աղմուկ հանեցին ամիսներէից ի վեր և հարկադրեցին քանի յանձնաժողով ուղարկել:

միմեանց հանդիպումից միշտ առաջ էին գալիս ընդհարումներ, որոնք խանգարում էին երկրի խաղաղութիւնը և յարատեւ կերպով պահպանում էին թշնամութիւնը, որը խորվարանքներ չտալով և էին միշտ շահագործել հանգամանքների համաձայն:

1889 թ.ին, Բիթլիսի վայրին, Բէաֆ փաշան, երկրի այդ վիճակին վերջ դնելու համար, մի կողմից արտօնութիւն ստացաւ կանոնաւոր զօրք բանեցնել, և թէ հարկաւորութիւն լինի, միւս կողմից արգելեց Միջբանիների և Խիւսիների տարեկան գաղթականութիւնը, մի միջոց, որ նրանց համար կործանում է առաջ բերում: Վճռելով բնաւ չը հրաժարվել իրանց հին սովորութիւնից և ընդդիմադրել վայրի հրամանին, այդ ցեղերին պատկանող մի քանի ընտանիքներ համաձայնութիւն կալայրին հայերի հետ և ստացան նրանց յօժարութիւնը փոքր խմբով գնալ այն արտատեղիները, որտեղ նրանք սովորութիւն ունեն արածացնել իրանց հօտերը:

«1893-ին Խիւսի ցեղից մի անձն, Մօլլա Բասուր անունով, որն իր ընտանիքով և իր ծառաներով գնում էր դէպի լեռնային արտատեղիները, արգելեց Տալուրիկի հայերի կողմից, որոնք սպանեցին նրան, յօշոտեցին և նրա կրծքի վրա սրով մի խաչ նշան գծեցին:

«Նրա կնոջն ազատեցին, պատուիրելով նրան գնալ և պատմել իր բոլոր տեսածը: Վճռելով իր անուանու սպանութեան վրէժն առնել, նա գնաց Մուշ

հովութեան գանձարանի վարչութեան անդամ Վ. Լեւոնի անդ քանանայ խաղաղեանցը իր յայտարարութեան հետ ներկայացրեց վարչութեան մի նամակ, Ա. ստորագրութիւնով. և 12 թուրքի փող:

Այդ նամակի մէջ գրված է հետեւեալը. «Առհասարակ դէմ լինելով եկեղեցում գանձանակ հաւաքելուն, եւ եկեղեցում տալի գանձանակի փոխարէն ուղարկում եմ ձեզ ի նպաստ քանանեանքի համար սահմանված գանձարանի, 12 թուրքի մի դոմար, որը իմ կարծիքով հաւասար է իմ մի տարվան գանձանակին, խոստանալով միանգամայն՝ այդ դոմարը իւրաքանչիւր տարի վճարել գանձարանին:

«Վարչութիւնս որոշեց, յիշեալ դոմարը մուտք գրել գանձարանի մատենանում, նուիրատու պարտին ընդունել գանձարանի ըստերաբանների շարքում և «Մշակի» միջոցով յայտնել նրան իր չնորհակալութիւնը:

Նախագահ վարչութեան՝
Գրիգոր ա. ք. Տէր-Բարսեղեանց

ՆԱԽԱԳԱՀ ԼՈՒԻՍԻՆ

«Մշակի» այս համարը բաղկացած է մէկ ու կէս թերթից:

Կ. Պօլսից ստացանք հետեւեալ տեղեկութիւնը. «Կատարական նախարարութեան կողմէ պատրիարքարան զրկուած թէղքերէ մը կը ծանուցանէ թէ նախարարներու խորհրդին որոշումով, գիւղական նախարարութեան մէջ օտմաներէն լեզուի ուսուցումը պարտաւորիչ ընող որոշումին գործադրութիւնը յետաձգուած է, բաւական է, որ օտմաներէնը զատիկապէս քաղաքի վարժարաններու մէջ»:

Արապական լրագիրների վերջին համարները, որ մենք երկէս ստացանք, հաստատում են այն լուրը, որ հաղորդել էր Կ. Պօլսի մեր թղթակիցը իր վերջին նամակում, այն է՝ որ Փարթի-Ասիայի մի քանի տեղերում մահմեդականները նոր յարձակում են գործել քրիստոնեաների վրա:

Մենք ստացանք Յարիցիից, Յովհաննէս Սարգիսեանի միջոցով, 160 թուրքի 20 կոպէկ փող, որ հանգանակված է մի խումբ հայերի մէջ: Հանգանակողները մի առանձին նամակով մեզ յայտնում են, որ այդ փողը յատկացնում են «Մշակին», խնդրելով որ մենք այդ փողով 1895 թ. «Մշակի» օրինակներ ուղարկենք զանազան հիմնարկութիւններին: Միւս անգամ կը տպագրենք թէ նուիրատուների անունները, և թէ այն հիմնարկութիւնների անունները, որոնց պէտք է ուղարկենք «Մշակի» օրինակները:

Հինգշաբթի, ամսիս 16-ին, Մցխեթում տեղի ունեցաւ հանգուցեալ իշխան Իվան Բագրատիւն-Մուրանսկու թաղումը, որ կատարվեց մեծ հանդիսով: Պատարագը և ամբողջ ժամերգութիւնը վրացերէն լեզուով էին: Դագաղի վրա գրված էին պատկերներ զանազան հիմնարկութիւններից: Ներկայ էին թաղման Կովկասեան կառավարչապետի ամուսին տիկին Զերեմետեվա, թիֆլիսի նահանգապետ իշխան Զերեմետեվ և այլ պաշտօնական անձինք: Գերեզմանի վրա խօսվեցին մի քանի ճառեր: Մարմինը թաղվեց մայր եկեղեցու մէջ: Թաղումից յետոյ ներկայ եղող հասարակութեանը ճաշ տրվեց վանքի սենեակներում և բազում:

Կ. Պօլսից մեզ հաղորդում են հետեւեալը. «Յուսկան պատրիարքարանի թարգման Զուգրիտէս, պատրիարքարան գալով Պատրիարք հոր ներկայացաւ և հաղորդեց յունաց Պատրիարք Անթիմիոսին, յունաց արևոտի և խառն ժողովին չնորհակալութիւնները այն սիրալիր ընդունելութեան համար, որ հայ պատրիարքարանն ու հայ հասարակութիւնը ըրած էր Տիեզերական Պատրիարքին»:

«Մշակի» խմբագրութիւնը հանգուցեալ Պօղոս Խլմայեանի դագաղի վրա այսօր պէտք է դնի մի պտիկ հետեւեալ մակագրութեամբ. «Շախկին աշխատակցին», «Մշակի» խմբագրութիւնին»:

Լոնդոնի «Times» լրագրին հեռագրում են Օդէ-

սայից, մարտի 6-ից, հետեւեալը. «Ամենայն հայոց կաթողիկոսը Եկատերինոպոլից պէտք է վերադառնայ Էջմիածին»:

Հնդկաստանի կալվածքադաւում հրատարակվող «Ուրա» ամսագիրը, իր փետրվարի համարում հաղորդում է, որ Ֆրանկ Ուօթնէ հոգեորականը կալվածքային մեթոդիստների եպիսկոպոսական եկեղեցում, յունվարի 27-ին, մի զգացված ճառ խօսեց, Հայաստանում կատարվող անգլիկանների մասին:

Մարտի 22-ին, չորեքշաբթի օր, երաժիշտ Նիկողայոս Տիգրանեան տալու է մի կոնցերտ արքունական թատրոնում: Պ. Տիգրանեան իր երաժշտական ուսումնաւարտել է Վիեննայի արքունական կոյրերի ինստիտուտում: Այդ կոնցերտը առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում մեր հասարակութեան համար, յատկապէս այն պատճառով, որ կոնցերտանտը պէտք է նուազի արեւելեան և հայկական եղանակներ, որոնց նա օւսումնասիրել է շատ մեծ տոկոսով իտալացի կոնցերտի պրոֆեսոր կազմված է շատ բազմակողմանի կերպով:

Տպագրելով թիֆլիսի հայ հոգեորականների ապահովութեան գանձարանի վարչութեան նամակը, մենք չենք կարող չը յայտնել մեր զարմանքը, որ այդ վարչութիւնը իր պարտքը կատարած է համարում, ընդունելով անյայտ նուիրատուին իբրեւ բարերար, և արձանագրելով նրա նուէրը իր մատենանում: Ինչ օգուտ դրանից: Վաղը, երբ նոյն պարտքը եկեղեցի կը մտնի, էլի քահանայն կամ տիրացուն գանձանակի թէլիքին ձեռքին կը կանգնեն նրա առաջ, և իրանց աչքերը կը չափեն նրա վրա... Թիֆլիսի հայոց քահանայները չեն հասկանում, որ խնդիրը իրանց մատենանի մէջ սրա կամ նրա անունը գրելը չէ, այլ այն պահանջն է, որ արտայայտողները մէկն է անյայտ նուիրատուն: Պէտք է վերացնել գանձանակը, ահա թէ ինչ է այդ պահանջը: Դրա մասին պէտք է մտածել և ոչ թէ մատենաներում անուններ արձանագրել:

Ամսիս 16-ին, ժամը 12 1/2-ին, քաղաքագլուխ Պ. Խլմայեանի մարմինը երկաթուղու գնացքով բերվեց Մցխեթ կայարանը: Քաղաքի ներկայացուցիչների և բազմաթիւ հասարակութեան առաջնորդութեամբ՝ դագաղը տարան Մցխեթի հայոց եկեղեցին, որտեղից այսօր, չաբաթ օր, ժամը 10-ին, պէտք է բերվի թիֆլիս:

Վանքի, փետրվարի 22-ից, ստացված մասնաւոր մի նամակով հաղորդում են հետեւեալը. «Տեղացի բողոքական միաբնակները նամակներով դիմումներ կընեն հայ-լուսաւորականներին, առաջարկելով միացնել երկու եկեղեցիները»:

Տարբազանքներ նամակագիրը չէ բացատրում, թէ արդեօք դա մի օր է տեղեւ միաբնակի երեւելայական վարժուած է, թէ աւելի լուրջ գործ: Միթէ բողոքական միաբնակները չեն հասկանում, որ թիւրքաց Հայաստանի ներկայ ճգնաժամին կրօնական խնդիրներով զբաղվելու ժամանակ չէ:

Մենք ստացանք մի նոր ժողովրդական գրքով «Միֆիլիս և իւր դարմանը» վերնագրով, որ տպվել է Նոր-Նախիչևան քաղաքում: Գրքովը կազմված է բաւական աղող կերպով՝ և ցանկալի է, որ նա տարածվի ժողովրդի մէջ, ի նկատի ունենալով որ սիֆիլիս դարձաբերի ախտը հետզհետէ տարածվում է մեր ամբողջ մէջ:

Պետերբուրգից «Новое Обозрение» լրագրին հեռագրում են մարտի 16-ից. «Կ. Պօլսից հեռագրում են «НОВОСТИ» լրագրին, թղթաթուղտ ընդհարում տեղի ունեցաւ թիւրքերի և հայերի մէջ: Կարող վերականգնվեց հոգեորականութեան միջամտութեան չնորհով: Սպասվում են փոփոխութիւններ միջնարարութեան մէջ»:

Ռուսաստանի նահանգներից մէկի 24 ուսուցիչները դիմեցին Պետերբուրգի գրադիտութեան մասնաժողովին մի խնդրելով՝ միջնորդել վերացնելու մարմնական պատիժը գիւղական տարրական դպրոցի դասընթացն աւարտած գիւղացիների համար: Ուսուցիչներին խնդրեց, մարաքաղաքի լրագիրներին խօսքով, քննվեց մասնաժողովին նիստերից մէկում: Կատարական բաժանելով այդ խնդիրը ստորագրող անձանց կարծիքը, մասնաժո-

ղովը յայտնեց, որ «մարմնական պատիժը խորին կերպով ստորացնում է ոչ միայն ժողովրդական դպրոցների նախկին աշակերտներին, բայց և ամբողջ ուսու ժողովուրդը»:

Եւ որովհետեւ մարմնական պատիժը վերացնելու միջնորդութիւնը դուրս է մասնաժողովի իրաւասութեան սահմաններից, վճռվեց այդ հարցը ենթարկել Կայսերական Ազատ-Տնտեսական ընկերութեան բնութեւնին:

Թիֆլիսի ժողովին երբ քանի գնում կատարելագործվում են իրանց արհեստի մէջ: Ահա մի նոր փաստ: Մարտի 15-ին, օր ցերեկով, մի փողոցային սրիկայ, նկատելով փողոցում երկու գիւղացու, որոնք եկել էին թիֆլիս գիւղական հասարակութեան գործերով, յայտնում է նրանց, թէ ինքը ճանաչում է այն մարդուն, որի մօտ գործ ունեն: Գիւղացիները Ախալքալաքի գաւառի Փոքր-Սամար գիւղից էին. միմյուր գիւղացիք հաւատում են սրիկային, որը նրանց առաջնորդում է զէպի մի յետընկած փողոց, այնտեղ յանկարծ յայտնվում են սրիկայի չորս ընկերները, և միասին յարձակվելով գիւղացիների վրա, խլում են նրանցից մօտ 20 թուրքի փող և անհետանում:

ՅԱՐԱԿԻԷ-ԿՈԼՕՆԻՅԻՑ մեզ գրում են. «Կոստ օրերս Էլզար թրքաբնակ գիւղում թուրք առաջակները գիշերով մտնում են մի թուրքի տուն թաւանելու նպատակով: Առաջակների ոտածայնից արթնանում է պառաւ-տանտիկինը: Երթված առաջակը ցանկանում է դուրս փախչել, սակայն պառաւ բռնում է նրան և քաշում է դէպի իր երիտասարդ որդին, որը այդ միջոցին արթնանում է: Թուրք առաջակը բռնվելուց աղաթվելու համար խելոյն հանում է դաշոյնը և խրում է պառաւի փորում: Պառաւը անմիջապէս մեռնում է: Առաջակները փախչում են, սակայն չուտով գտնում են նրանց ու կախաւորում են»:

Հին-Նախիձեւի Յիւսա գիւղի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Այս երկտողով հոգաբարձութիւնս հրապարակով իր չնորհակալութիւնն է յայտնում եղբ. Սարգսեանցներին, որ նուիրեցին 400 թուրքի պ. Ապեհանցին, որ նուիրեց 40 թուրքի, եղբ. Բունեթեանցներին, Ս. Սարգսեանցին, Տէր Նիկողոսեանցին, Զ. Գրիգորեանցին, որոնք նուիրել են թէ գրքեր և թէ լրագիրներ, և ուսուցիչներին, որոնք չեն զլանում»:

Տարբ. իրարից մեզ հաղորդեց, որ չաբաթ օր, ժամը 10-ին, պէտք է բերվի թիֆլիս:

ԱՍՏԻՍԱՆԻՑ մեզ գրում են. «Երբեք եպիսկոպոս Ստեփանէն նշանակված է մեր թիմի ժամանակաւոր կառավարիչ, այդ մասին արդէն կոնգրէսը ստացված է և մօտ օրերս սպասվում է սրբազանի գալուստը: Անձամբ ճանաչելով սրբազան խորհրդին, հաւատում ենք, որ նրա օրերով մեր յետընկած շատ խնդիրները, ինչպէս են՝ սովորաբար բացվելու հարցը, քահանայական հարցը և գրադարան բացվելու խնդիրները կը ստանան իրանց լուծումը: Մեր տիրացուների բանակում տիրում է իրարացում, որովհետեւ այժմ նրանց զգում են, որ այլ ևս չեն կարող առաջվայ նման փողի միջոցով առաջ խաղալ. նոյն իսկ այն անձինք, որոնք սովոր են չըբաւաւանել ամեն նորեկի և իրանց սաղով պարացնել նրան», յուսահատ յետ են թաշվել և իրանց կարապային երգերն են երգում»:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՅ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցը Կ. Պօլսից ուղարկել է մեզ հետեւեալ տեղեկութիւնը.

Ռուսական հնագիտական հաստատութեան բացումը տեղի ունեցաւ կիրակի օր մեծ հանդէսով: Ներկայ էին զեսպան Նէլիտով, զեսպանատան և հիւպատոսարանին պաշտօնէութիւնը, և ուսական գաղթականութեան մասնաւոր ներկայացուցիչներ:

«Գոհարանական աղօթքը մը կարդացուել է յետոյ, Նէլիտով ատենաբանութիւն մը ըրաւ, որուն պատասխանեց Հաստատութեան տնօրէն Ուսպէնսկի:

«Քարտուղար Պաղօղի կարդաց հեռագիրներ Նորին Մեծութեան Նիկոլայ Կայսրի, Հաստատութեան պատուակալ անդամ Կոնստանդին, Սեր-

գէյ և Վլադիմիր Մեծ Դքսերուն, Օդէսայի, Կազանի, Նովորոսիսկի համալսարաններուն և Ռուսիոյ բազմաթիւ գիտնական ընկերութեանց կողմէ: Հետագիւրները ամենքն ալ բարեմաղութիւններով լեցուն էին գիտնական այս հաստատութեան համար: Բաժակներ պարպուեցան Թագաւոր Կայսրի, Հաստատութեան, զեսպանին և ներկաներուն համար:

Կ. Պօլսից ուսական զեսպանութեան անդամները իրաւամբ մասն կը կազմեն այդ Հաստատութեան, ինչպէս նաեւ Աթէնքի ուսական զեսպանութեան անդամներն ալ, եթէ փափաք յայտնեն: Հնախօսութեամբ և բիւզանդական արձանագրութիւններով զբաղող բոլոր անձեր կրնան ազատօրէն յաճախել Հաստատութիւնը, մասնակցել աշխատակցութեանց, դիւանատունէն և մատենադարանէն օգտուել: Մատենադարանը ունի 6000 հատոր, որոնք կը վերաբերին հնագրութեան զանազան ճիւղերուն: Բոլոր այս գրքերը տրուած են ուսական գիտնական մարմիններէն. հնախօսական մեծ շահեկանութիւն ունեցող 2000 հատոր արդէն հասած և իրենց տեղը դրուած են: Հաստատութեան կազմակերպութիւնը արդէն աւարտած ըլլալով, աշխատութիւնները սկսած են:

ՆԱՄԱԿ ԱՆՍՏԻՍԱՆԻՑ

Վիեննա, մարտի 1-ին

Ուշագրութեան արժանի մի ընդարձակ թղթականութիւն երեցաւ «Neue Freie Presse» լրագրի մէջ, ուղղուած Կ. Պօլսից: Նրա ամենակարևոր կէտերը կը փութանք հաղորդել ներկայիս:

Թղթակիցը նախ և առաջ կը հաստատէ թիւրքական վարչութեան զեղծումները, որոնց մասին արդէն գրուած է թէ Եւրոպական մամուլին և թէ հիւպատոսական տեղեկագիրների մէջ: Կընդունի թէ հայերը հայկական նահանգների մէջ չունեն կենքի և ինչքը պահանջութիւն և թէ հայ կիւնք և աղջիկները ստեղծել կը յափշտակուին քիւրդ պէկերէ և կը պահուին նոցա հարէմներին մէջ: Նա կը յարէ, թէ հայերի ազգային շարժումը երթալով մեծանալու վրա է և թէ կացութիւնը այժմ շատ լուրջ է: Այնպիսի հայեր, որ երբեմն անտարբեր էին դէպի ազգային գործերը, այժմ, մահաւանդ Սասունէ արեւելու դէպքերէն ի վեր, մեծ հետաքրքրութեամբ կը հետեին հայկական հարցի ընթացքին: Իսկ թիւրքերը, որ մինչև այժմ վարժուած էին հայերի մէջ տեսնել միայն չլու լուրջ հպատակներ, զարմացած և զայրացած են հայ ժողովրդի ինքնաճանաչութեան զօրաւոր ցոյցերէն, որ տեղի ունեցաւ թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում: Թիւրքերը պարբարաւ կանուանեն հայերը այն պատճառով, որ կառավարական պաշտօնների մէջ մի քանի բարձրաստիճան հայեր կան, ինչպէս նաեւ կառավարութեան հետ գործ ունեցող սակաւաթիւ հարուստ հայ անձները:

Թղթակիցը կը խոստովանի, թէ իր համար անհասկանալի է թիւրքերի այն պահանջը, թէ մի քանի պաշտօնատարների կամ հարուստների շահին համար համայն ժողովուրդը, որ դառնապէս կը հեծէ հարստահարութեան տակ, պէտք է զգայ իր արդար բողոքը և թոյլ տայ իրան բողոքովին փշաւայ:

Գալով Սասունի անցքերին, թղթակիցը այդ մասին ոչինչ վճռական խօսք չէ ասած և կը սպասէ միջազգային յանձնաժողովին քննութեանց արդիւնքին: Սակայն սա կենթադրէ թէ հայերի տեղեկութիւնները ճիշդ լինեն և թերեւ միայն մի քիչ չափազանցած: Բարենորոգում երի պէտքը անհրաժեշտ կը համարի և խորհուրդ կը տայ թիւրքային զանեք շուտով ներմուծել հայկական նահանգներին մէջ: Իրեն բարենորոգումներ կը նշանակէ հայերէ և մասնատականութիւնը, հայերէն լեզուի թիւրքերէնի հետ համահաւասար գործածուելը դատարանների մէջ. մի քրիստոնեայ կառավարիչ անուանումը և այլն:

Այս թղթակցութիւնը անշուշտ մի շատ նպաստաւոր տպաւորութիւն ըրաւ աւստրիացի կըրթիւն և պէտք է խոստովանել, թէ «Neue Freie Presse» լրագիրը, գիտութեամբ կամ անգիտութեամբ, առաջին անգամն է, որ հայկական հարցի վրա մի այսպիսի ճիշդ, անկողմնակալ և առաջկայական (objective) տեղեկութիւն հաղորդեց իր առհասարակ ինտելիգենտ դասակարգից բաղկացած ընթերցողներին:

Տ.

ՖԻԼՈՍՈՖԻԱ

Ֆրանսիական «Figaro» լրագրում Ժիլ-Սիմոն մի յօդուած տպեց, որով իր ուրախութիւնն է յայտնում այն բանի առիթով, որ Ֆրանսիան ընդունեց Վիլհելմ կայսրի հրապարակած և ուղարկուած է իր նաւերը Կիւ, Հիւսիսային ջրանցքի բացմանը ներկայ լինելու համար: Ժիլ Սիմոն մասնաւորօրէն է անում Ֆրանսիայի վերաբերմամբ Վիլհելմ կայսրի կողմից արած մեծահոգի քայլերի վրա, որինակ տիկին Կարնոյն արտայայտած ցաւակցութիւնը, ֆրանսիական օֆիցէրներին ներուշիւնը հնարհիլը և այլն: Մի և նոյն ժամանակ Ժիլ Սիմոն բերում է կայսրի իրան աւած խօսքերը 1890 թ.ին. «Ես ցանկանում եմ համոզել ֆրանսիացիներին իմ խաղաղասիրութեան մէջ: Դա մտածմունքներից յետոյ ես այն եզրակացութեան եկայ, որ իմ դրութեան մէջ աւելի լաւ է բարութիւն անել մարդկանց, քան թէ երկուդ ազգի նրանց»:

Բացի դրանից, մի բարձրաստիճան անձն Ժիլ Սիմոնն ասեց. «Վիլհելմ կայսրը հեռու է նուաճողական ձգտումներից. նա գիտէ, որ Եւրոպան չի թոյլ տայ որ և է նուաճումներ, և միայն խաղաղութեան ապահովութիւնն է ցանկանում: Ելլաւ—լուծարողական դուր մի և նոյն է չէր ստանայ. հաշտեցէք այդ փաստի հետ, և այն ժամանակ Վիլհելմ կայսրը ձեր ամենալաւ բարեկամը կը լինի, իսկ պատերազմի վտանգը կանհետանայ առ միշտ»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅՈՒՅՑ

Տրապիզոն, մարտի 1-ին

Թրիպոլի պզտի նաւահանգիստ մէ, որ կը գտնուի քաղաքիս արեւմտեան կողմը՝ շրջանաւոր մի քանի ժամուայ հեռաւորութեամբ:

Փետրվար 21-ին, երեկոյան, սոյն քաղաքացի վաճառական Գրեհան Գեորգը, որ երկու շաբաթ առաջ տեղս ամուսնացած էր, իր նոր-հարստի եղբորով և ուրիշ 3 հետնորդներով տաճկական շրջանաւ մը կը կը նստի զէպի իր ծննդավայրը: Նոյն օրը նա նստած ըլլալը հեռագրած էր Թրիպոլի իր տունը, որպէս զի հետեւելու առտուն նաւակով զինքն զիմուսնուրու գային:

Հետեւել օրը գիշերով նաւը Թրիպոլիի նաւահանգիստը հասած է արդէն: Աւշալույսը կը սկսի բացուիլ: Գրեհանը աչքերնին յառած են զէպի ցամաք՝ իրենց սպասած նաւակը տեսնելու յուսով: Պարսպ յոյս, նաւակը չերեցաւ ու չերեցաւ: Գիտէք ինչու... որովհետեւ քաղաքը հեռագիրը իր ճամբան երեք օրու հազի կարողացած էր առնել: հեռագիրը մը հոսկէ Թրիպոլի երեք օրէն՝ փոխանակ 3 վայրկեանի. —բայց այդ, ուր երեք մենք, —բաղաւոր Տաճկաստանի մէջ:

Գրեհանը ալ յոյսերնին կտրելով 6 հոգի նաւակ կը նստին և կը սկսին ցամաքին մօտենալ, երբ զեռ աղմուկով էր: Կը սկսին ցամաք ելլել: Գրեհան Գեորգը թէպէտ (անցագիր) կը ներկայացնէ քովնէրին, որ քարափին վրա պաշտօնին զուտը կեցած էր, բայց և որուն աչքերը չէին դուրս աղմուկովին մէջէն որոշելու նաւակին մէջ գտնուողներուն իսկական թիւը, հակին ալ իր մարդ տեսնել կարծելով: Երբ կը տեսնէ թէպէտին մէջ 6 հոգի միայն նշանակուած կը հարցնէ Գեորգին թէ՝ միւսները հապա ձեռքէն էին... նա ալ կը պատասխանէ, թէ վեցէն զատ՝ ուրիշ մարդ չի կար: Քովնէրը կը բարկանայ, կարծելով թէ զինքը կը խաբէ. «չուտ, ըսէ տեսնեմ ձեռքէն էին և ուր փախան, քովէ կը պահանջեմ դատնը, պատասխանատուութիւնը դու ես...» Մինչև այդ ժամանակ նաւակին մէջ եղողները արդէն ցամաք եկած ու հարսին հետ ուրախ-ուրախ զէպի տուն դիմած էին: Գեորգը կուգէ ինչորէն վերջ տալ և կըսէ թէ՝ իրենց վեց հոգի էին, ինչպէս որ թէպէտէնին մէջ ալ արձանագրուած էր. իսկ եթէ քովնէրը կը կասկածէր՝ թող իր պաշտօնը լաւ կատարէր և անձինքը նաւակէն դուրս չեկած համէր քանի հոգի ըլլաին...:

Է՛հ, ալ բաւական էր Գեորգին այդ աստիճան համարձակութիւնը. վայր, նա պիտի հասկցներ քովնէրին, թէ ինչ է նրա պարտականութիւնը... ինչ յանդիմութիւն իր այդ վարմունքը քովնէրին անձնապատուութեան կը դպչի և զայն այն աստիճան կը բորբոքէ, որ Գեորգը տաք ապտակ մը կուտէ անոր բիրտ ձեռքերէն: Վերջին ալ կուգէ փոխադարձ հատուցանել քովնէրին, պողպատով

ալ թէ «պէն ռուսիայի իմ, էյի պար» (ես ռուսահայտակ եմ, լաւ նայէ). քովնէրը՝ ռուսիայի մի սրն, տահա էյի» (ռուսահայտակ մի ես, աւելի լաւ) ըսելով՝ քանի մը հարուածներ ևս կիջեցնէ անոր գլխուն, մի և նոյն ժամանակ հրամայելով ոտնիկաններուն ձերբակցել ու անմիջապէս բանտարկել: Հրամանը կը գործադրուի Քովնէրին սիրտը ալ հովցած էր:

Գեորգին եղբայրը, աղքատները կուգին գործին միջամտել, բայց լսող չը կար: Գայմազադին կը դիմեն, բայց կարողացան իր: Գայմազադին այս դէպքին մեծ կարեւորութիւն տալով՝ արդէն անմիջապէս հեռագրով տեղեկացրած էր թէ հոս և թէ Պոլսի, ինչորէն քաղաքական զոյն տալով (թէ բանտարկեալը մարդ փախցուցած էր և թէ իր վրա խուզարկուած ժամանակ՝ շատ դիմադրեր է...): Բանտարկեալին եղբայրը տեսնելով որ ուրիշ կերպ չը պիտի կրնայ յաջողի՝ անմիջապէս տեղաւոր և Կիրասովի ռուսաց հիւպատոսներուն հեռագրով կը բողբէ քովնէրին ու գայմազադին վարմունքին դէմ: Արդէնքը սա կըլլայ, որ Գրեհան Գեորգը չորս օր բանտը մնալէն վերջ կարձակուի:

Այժմ նա դատ պիտի բանայ քովնէրին դէմ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռաշա, փետրվարի 14-ին

Այսօր ամբողջ Պարսկաստանը սուգի մէջ է. խանութները փակված են, առևտուրը դադարած. հեռագիրը հաղորդեց մեծ կրօն ապեւտի մահը, այն կրօնապետի, որի մի խօսքը օրէնք էր պարսիկ ամբոխի համար, որի խօսքով շարժուած էին ամենքը՝ ամբողջ պարսկական հողի մէջ ծայրից սկսած մինչև սրտը:

Այս երբօրը օրն է, որ մեզանում ևս մի ուրախութեան նշան չէ երևում, ընդհանուր տրեւրութիւն է ամեն տեղ: Մեր հայ վաճառականները, որ Վարդանանց տօնին չէին փակել իրանց խանութները, չէին յարել անմահ նահատակներ իր յիշատակը՝ հանդիսից բացակայ գտնվելով, երբ որ փակած պահանքին խանութները: Պարսիկ ամբոխը իրուրեք կազմած կրօնական հանդէսներ է կատարում: 50—60 հոգի կրտսերից, կուրծքներնին ծեծելով շրջում են փողոցները վայրենի աղաղակներով. նրանց առաջին տանում են զարդարած ձիաներ, արեւով խողովող զիւրիկներ և մեծ մարդաբնի յաջորդ Ալիի նշանը: Ապա հետևում էր ամբողջ նոյն աղմուկներով, անդադար զիններին յարդ կամ ծղոտ ցանկով:

Միջա-Շիրազի հանդիսից կրօնապետը, որ պէս պատմում է, 70 տարեկան մի մարդ էր, որ մեծ ժողովրդականութիւն ուներ ձեռք բերած. նա ամբոխին պահում էր խաղաղութեան մէջ և քարոզում էր սէր դէպի քրիստոնեաները, նամանաւանդ զէպի հայ տարրը: Նա ողորմած էր և զըթախուտ. ամեն տարի նա միլիոններ էր ստանում մահմետական ամբոխից աշխարհի զանազան կողմերից, մանաւանդ Հնդկաստանից, սակայն այսօր նա և ոչ մի կօպէլ չէ թողել իր ժառանգներին, բաժանելով բոլորը աղքատներին և կարօտեալներին:

Հնդկաբլթի, փետրվարի 9-ին, Վարդանանց տօնի պատճառով հայոց զարդարում հանդէս կար. հանդէսը չքիւղ անցաւ. ներկայ եղողներին մեծամասնութիւնը կանայք էին: Նոյն երեկոյան զըպարոցում, ի յիշատակ Վարդանանց տօնի, երիտասարդները ներկայացրին «Վարդանանց պատերազմը» և «Երեք քաջեր» թէև ներկայացումը աւելի անցաւ և դաժնիւ լի էր բազմութեամբ, սակայն մեծամասնութիւնը օտարականներ էին և բաւազգիներ, իսկ տեղացի փայլում էին իրանց ցաղապարկները: Չը փոխել տեղացիներին այս անտարբերութիւնը զէպի աղջկային և կրօնական հանդէսները ինչին վերադրեց. հետեւել գիշերը տըրվեցաւ ներկայացում կանանց համար, որը դարձեալ բաւականին աղիւղ անցաւ:

Երեք օր շարունակ փող շարաւային տաք քաւին բաւական վիշտներ հասցրեց Ռաշային. այդ վեցին մի քանի անգամ Դաուերի ծաղիկները բացվեցին. մեզանում այժմ կատարեալ զարուհ է. բնիկ մշակութիւնը շուտով կը սկսվի:

Ընթերցողներին վարչութեան ձեռնարկած վիճակաւոր տեղի ունեցաւ ամսին 5-ին, անդիլական բանիկի ներկայացուցչի և մի քանի անձանց ներկայութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնից մարաքաղաքի լրագրիներին հեռագրում են, որ ազատամիտ կուսակցութիւնը յոյս ունի, որ Գիւղաթոն չուտով Լօնդոն կը վերադառնայ: Վիգերի պատկառելի զեկավարը կաղերքովից լիբիերում, և նա պատրաստուած է ոչ միայն վերադառնալ Անգլիա, բայց և իր տեղը գրաւել պարլամենտում՝ քաղաքական գործերի ընտրութեանը եռանդով մասնակցելու համար: Ազատամիտ կուսակցութիւնը դիտարկութիւն ունի դիմել Գլազգոսին՝ խնդրելով նրանից կըրկին միմիտութեան մէջ մտնել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԵՐԼԻՆ, 14 մարտի: Կայսրը թագաժառանգի հետ միասին եկաւ Եւրոպ Ֆրիդրիխսթուէ, ուր զինուորական հանդիսադարձի հետ մտաւ ծառաստաններ: Իսկան Բիսմարկ, կիրաներեան համազգեստով, եկաւ կառքով: Չօրքերը զինուորական պատիւներ տուցին: Կայսրը շնորհաւորեց իշխան Բիսմարկին զօրքի կողմից և տուց նրան սակէ սուր, ասկով: «Աւելի յարմար ընծայ չէր կարելի զտանել, քան այս սուրը—գերմանական աղջկային զէնքը, նշան յաղթութեան և մի միջոց, որը երբեք չէ սխալեցնում»:

Սրի լրա փորագրված էլ զատ-լուծարողական զերը Գերմանիայի շնորհակալութիւնն է յայտնում Բիսմարկի գործերի համար: Ապա դրանից յետոյ տեղի ունեցած նախահայր, կայսրը տուց Բիսմարկին Վիլհելմ I-ի կնիքը, որը գտնուում էր հանգուցեալ Կայսրի գրասենյակի վրա:

ԲԵՐԼԻՆ, 14 մարտի: Վերադարձաւ Ալեքսանդր թագաւորը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի: «Саратовский Дневник» լրագրը դադարեցրած է չորս ամսով:

ԱՍՏՐԱԽԱՆ, 16 մարտի: Դովի հետ հաղորդակցութիւնը բացված է: Գուրս եկաւ առաջին շօգնաւոր:

ԲԵՐԼԻՆ, 16 մարտի: Բէյստագի նախագահ է ընտրված ծախկին փոխնախագահ Բուր. ազատամտող ժողովրդական կուսակցութեան անդամ Դովի ընտրված է առաջին և կենտրոնի անդամ Դյանս Երկրորդ նախագահ:

Ֆրիդրիխսթուէից հաղորդում են, որ թագաժառանգը տուց Բիսմարկին ծաղիկներ մի շքեղ փունջ կայսրահայր. ասկով «Մայրիկից» Բիսմարկին շնորհաւորեցաւ համար Ֆրիդրիխսթուէ և կան Պրուսական Երեւիլի պրինցի իր մտադրահաս որդով, Բարկէնի մեծ դուքսը, կայսերական կանցլէրը և ուրիշ բարձրաստիճան անձինք:

ԿՕՊԵՆՀԱՎԵՆ, 15 մարտի: Ապէրանդից հեռագրում են, որ զանիական կուսակցութեան պարագլուխը Հիւսիսային Շվեդիցում՝ Հանսեն Ներսեմէլէ կայանաւորված է մեղադրվում պետական ղեկավարութեան նախապատրաստական գործողութիւններում: Ներսեմէլէ բոլոր գործողութիւններին նպատակն էր՝ միացնել Հիւսիսային Շվեդիլից Գանիայի հետ:

ԼՕՆԴՈՆ, 15 մարտի: Տօկիոյց հաղորդում են, որ Լի-Խունց-Չանցին վիրաւորելու պատճառով խաղաղութեան մասին բանակցութիւնները դադարեցրած են: Լի-Խունց-Չանց չէ կամենում բռնկվել եւսպոնական բժիշկներից, և նրա մօտ ուղարկվեց Տօկիոյ գերմանական դեսպանութեան բժիշկը: Լուր է պտուտում, որ Լի-Խունց-Չանցի առողջանալը կասկածելի է երևում. գնտակը նըստել է վտանգաւոր տեղում:

Տօկիոյց հեռագրում են, որ եւսպոնական զորքերի մէջ Պորտ-Արտուրում խօսքա երեսը Մի օրվա ընթացքում հիւանդացան 38 հոգի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Առաջիկայ թագաւորութիւնը ի նկատի ունենալով, կայսերական պալատի միմիտութեան կից մի յատուկ յանձնաժողով է կազմված՝ թագաւորական գործերի համար, և այդ յանձնաժողովը արդէն սկսել է իր գրաւորները:

Սիլլանական հեռագրութիւններ են կատարվում Հիւսիսային Կովկասի և Անդրկովկասի մէջ երկաթուղային հաղորդակցութիւն հաստատելու համար՝ Նէվիսոմիսկ ստանիցայի, Սոխումի և Սեւակի վրայով:

ՊԱՐԻՉ, 16 մարտի: «Gaulois» հաղորդում է, որ հայրենասերների լիզան վերակազմվեց Գլաուէրի նախագահութեամբ,

Հանրապետութեան նախագահը եկաւ բանակատեղին Սատտուում և զորապետը յանձնեց Մադալանկար գնացող զօրքերին: Նախագահը այդ ժամանակ ասեց. «Մի մոռանալ, որ զորապետ ծաղիկներում դուք տանում էք, զէնքի դրութեան հետ միասին, ֆրանսիայի հանձնարը: Ես հաւատարմած եմ, որ դուք՝ արժանի կը կացուցանեք ձեզ այն կրթիչ նպատակին, որ ձեզ վրա դնում է հանրապետութիւնը»:

ԽՈՐԱԳԻՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՍՏԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաւոր-ծուրեան, սիֆիլիս և վնասական հիւանդութիւններ:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեար-դային:

Կ. Գ. ԲՈՒԴԿՈՎԱՆԻ—10—11 ժ. ներքին, երե-խաների և կանանց:

Կին-բժիշկ ՏՈՒԿՈՎԱՆ—11—12 ժ. կանանց:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՏՎԻԻ—11—1 ժ. ականջի, կո-կորդի, թիւ և կրծքի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—11/2 ներքին և երե-խայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒԿՈՎ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7 1/2 ժ. Կին-բժիշկ ՏՈՒԿՈՎԱՆ—7—7 1/2 ականջի, կոկորդի, թիւ և նեարդային:

Ա. Գ. ԳՈՒԿՈՎԱՆ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խիւի, ա-րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ: Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցում ընդունվում են և Գիշերօթիկ Հիւանդանոց:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

ԳՕՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

ԿԱՊԱԼՈՎ Է ՏՐՎՈՒՄ ՆՈՐՈԳՎԱՍ

ԲԱՂԱՆԻԲ

Ամբողջ քաղաքում միայն մի բաղնիք է: Բաղնիքին կից տրվում են և 5 սենեակներ:

Գնի և պայմանների մասին զիմել ԹԻՖ-ԼԻՍ, «Վերսայլ» հիւրանոցի գրասենեակը: (№ 30) 2—3

ՎԱՅԱՌՎՈՒՄ Է

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ԿԵՂԾԻՔԸ

Պարզեց՝ Ա. Ե. Ս.

ԳԻՆԵ Է 50 ԿՕՊ.

Գիմել այս հասցեով՝ БАКЪ. Типография „Ароръ“. (№ 30) 2—10

ՊՕՒՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Հայոց թագաւորների պատկերներ)

Գինը 10 հատը—6 ռուբլի:

ՀՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Լուսանկար, չափը 12 վերջի)

Գինը 10 հատը—15 ռուբլի, 5 հատը—8 ռուբլի, հանդերձ ծանապարհածախսով: Յանկացողը կարող է ստանալ ՆԱԼՈՒՆՈՎ ՊԱՏԵՃՈՎ:

Հասցէս. МОСКВА, армянск. перс. ИВ. ГЕЧЕВЪ. (№ 27) 4—5

Աշակերտական գրադարան բանալով Թիֆ-լիսի ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ թաղի ծխական դպրոցին կից, խնդրում եմ՝ յարգելի ման-կական գրողներին, թարգմանիչներին նու-րի մի օրինակ իրանց աշխատութիւն-ներին:

Հասցէն՝ Тифлисъ, Навтлугъ, армянс-кое училище.

Ուսուցիչ Թ. ՄԻՐԻՄԱՆԻԱՆ

(№ 26) 3—3

ԳԻՐԳՐ ԱՐԾՐՈՒՆԻ

- 1) «ԷՎԵԼԻՆԱ», էտիւդ, դիւն, և . . . 50 կօպ:
- 2) «ԱՅՏԵՆԻ ԵՒ ԱՅՏԵՆԻ», . . . 10 »
- 3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ» . . . 25 »
- 4) Նոյն գերմաներէն լեզուով . . . 25 »
- 5) «DIE HUNGERSNOTH IN TUR-KISCHE ARMENIEN» . . . 20 »

Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և Թիֆլիսի գրավաճառանոցներում: (№ 127)

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Զորքը շարժվել է մարտի 22-ին 1895 թ.

ԿՕՆՑԵՐՏ Ն. Թ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ

(Գաղանկավորի վրա) որը առարկայ է երաժշտական ուսումը Վիեննայի Արքեոնական Ինստիտուտում կայրերի համար:

Մասնակցությունը պ.պ. Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ և Մ. Ա. ՎԱՐԴԻՆԵԱՆԻ
Բ ա ժ ի ն Ա.

1) Բայելաթի—բլերգ. Տիգրանեանցի, ա) Զօրան, բ) բայելաթի, գ) զեաֆ, կը նուագէ Հեղինակը: 2) Ֆանտազիա լիտան «Օտելլո» Լինստի, կը նուագէ Մ. Տ. Վ. ՎԱՍԻԼԵՎԻ: 3) Եօթն օր, եօթն գիշեր (ժողովրդական հայկական երգ) կերպէ Մ. Ա. ՎԱՐԴԻՆԵԱՆԻ: 4) ա) «Ան զիւրի, զիւրի» (Վրաց. երգ) (Հայոց ախլիկներ) № 1, բ) «Յնա ուսում» (Հայկական պար Ալեքսանդրապոլի) № 5, գ) «Կյոյ պար» Չեմ, չեմ, չեմ կը նուագ խաղալ № 4, դ) «Շարաշուր» (պարական պար) № 7, Տիգրանեանցի գործ. 1. ժողովածուից, կը նուագէ Հեղինակը:

Բ ա ժ ի ն Բ.

5) ա) «Զիւր գլխի ֆատէն կիտամ» (Հայկական պարերգ) Տիգրանեանցի, բ. «Վարդ կօշիկ» (պար Ալեքսանդրապոլի), գ) «Շալալի» (Հայկական պար Ալաշկալայի) կը նուագէ Հեղինակը: 6) Սոլովյի «Վիլիսներ, կը նուագէ Մ. Տ. Վ. ՎԱՍԻԼԵՎԻ: 7) «Ինչմանէդ արքայական» (Հայկական երգ) * «Երբ որ բացուին դռներ յուսոյ» կը երգէ ՎԱՐԴԻՆԵԱՆԻ: 8) ա) Բայելաթի շիրադ. Տիգրանեանցի, բ) Ուզուն դարա (պար Վարադի) գ) «Գոյ—գոյ» (պար կինստուրի) կը նուագէ Հեղինակը: Սկիզբն է երեկոյան 8 1/2 ժամին:

ԻՌՀԱՐԱՐԱԿԱՆ IX ԴԱՍԸՆԹԱՑԻՐ

ՀԱՅՈՒՆՆԱՅ ԲԱՐԵՆՈՐԵԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մօտ օրերս սկսվելու է: Յանկացողները գրվել թող բարեհաճն զիմել Գանձակայա փողոց, տ. № 25:

(№ 31)

1—2

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Բ Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն Վ Ա Ր Զ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

սրանով տեղեկացնում է ամենքին, որ շարժվել է մարտի 18-ին, Թիֆլիսի քաղաքացիական Պոլսի Ալեքսանդրապոլի իգմայրանի թաղման առիթով, Գաղափարական վարչության և նրան ստորադրեալ հիմնարկությունների մէջ ԶԲԱԿՄՈՒՆԻԿԵՐ ԶԵՆ ԼԻՆԻ:

1—1

Հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ, տաճկից ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏԻ 19-ին, ԱՌԱՌՑԵԱՆ ԺԱՄԸ 12-ին, ա. պատարագից յետոյ պիտի կատարվի ԹԱՆԴՈՅԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱՅԱՆԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ԵՐԵՑՓՈԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ուստի հրաւիրում եմ նոյն եկեղեցու ծխական ժողովուրդներին շնորհ բերել եկեղեցի մասնակցելու ընտրութեան:

Թիֆլիսի բ. մ. եկեղեցիների գործակալ՝ Աշոտ քահանայ Թեմուրազեանց
1—1

Լոյս տեսաւ

ԵՐԿԻՐՈՐԻ ՀԱՏՈՐԸ

Ա.Լ.ԲԱՆԴԱՐ ԵՐԻՑԵԱՆԻ

«ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԻ XIX ԴԱՐՈՒՄ»

ՄԱՍՆ Բ. (1831—1842 թ.)

Կաթողիկոսութիւն Տ. Յովհաննէս VIII Կարբեղւոյ և «Պօլօժէնիէ»

Գիւն 2 Բ. ճանապարհածախսով 2 Բ. 50 Կ:

Առաջին և երկրորդ հատորները միասին 4 Բ. ճանապարհածախսով 5 ԲՈՒՐԻ: (№ 30) 3—5

ՍԱԼՄԱՍԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԹՎԱՆՈՒՄ

Խնդրում ենք հայ խմբագիրներին, հեղինակներին և բարեմբ անձանց, որ իրանց օգնութիւնը չը զանան յայտարար հայոց այս միակ գրադարանին, որի ձեռնարկը ըզգալի կերպով կը նպաստէ զաւարթալ կրթական գործին:

Խնդրում ենք նախապաշտօններին զիմել այս հասցեով. Սերսի, Salmast, Սալմաստի հայոց գրադարանին, Հաֆթվանում:

Սալմաստի Հաֆթվանի զիւրի գրադարանի վարչութեան: (№ 10) 8—10

Ի. Ա. ԲՐՈՇ ԳՐԱԴԱՐԱՆ

Յանձն է առնում ՀԱՇՆԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԱԿԻ և ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ուսանելի, փրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան աւետարական և արդիւնաբերական հաստատութիւնների հայկերէնը և մասնաւորապէս, քննում, փակում, բանում, և կազմում է աւետարական մատենաներ. ընդունում է աւետարական մատենաների զանազան թիւրքիզացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը:

Այն անձինք, որոնք հունեն հաշւապահներ, բայց ցանկանում են ունենալ կանօնաւոր հաշւապահութիւն, կարող են ունենալ ՀԻՇԻ ՏԵՂԵ ԿՈՒՐԻՒՆԵՐԻ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑԻՐ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՕՆԱՌՈՐ ՄԱՏԵԱՆԵՐ: Մատենաներ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի: Հասցէն Ելիզաբետինսկայ, № 25, ուստիականական վարչութեան վերին յարկում:

Ուսուցանում է:

ՀԱՇՆԱՊԱՀԱԿԱՆ ԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար } Հաշւապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
} Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ
Պարագլուխները, յետոյ են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում: Առաջադէմ պարագլուխներին համար ՎԿԱՅԱԿԱՆԵՐ ԲԵՂԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ և ուրիշ անձերից:

(№ 16) (2) 51—100

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԵՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻՉՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար «ԵԱՎԱ» Փերմայի մէջ. (С.-Петербург, Большая Морская, 38).
Ծախվում է կօշիկալ և զեղային ապրանքների բոլոր լաւ մաղաղիկներում 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտիէրպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թվին:
(№ 151) 16—50



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ ԴԷՄ

Բժշկական դէպքառաւանդից թղթաւորված

ՕԼՖԱԿՏՐՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. Ժ. Ի. Մ. Ո. Ի. Ն. Ս. Կ. Ո. Ի.

Ծախվում է 40 կօպէկով

Կեղադործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ, Թիֆլիսում (№ 22) 6—30

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԴՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 թ.

„ՐՈՍՍԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Օրինակ: Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրվում է 5,000 Ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ: Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսական պրէմիա 30 Ր. 80 կօպէկ:

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 Ր. գումարների մէկ անձի կեսնքի համար:

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում:

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարախիսիկ հիւանդութիւնից, խօլերայից և այլն:

Յունվարի 1-ին 1894 թվի «Րոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,631,010 Րուբլի դրամագլխով:

Ապահովագրողները մասն ունեն ընկերութեան եկամուտներից:

Ապահովագրողների զիւրիգէնտը 1893 թվի համար—120% է:

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергиевская, ճ. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում:
(№ 85) 10—20

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ԹԻԻՐԲԱՅ ՀԱՅԵՐԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆԸ 20 ԿՈՊԵԿ

Թիֆլիսում վաճառվում է «Մշակ» խմբագրատանը, Նոյնպէս և Կօրցօլայա փողոցի վրա հետևեալ խանութներում՝ Եփրեմ Մատթեոսեանի լաւագանքի մաղաղիկում և Տէր-Յովնէփեանի ծխախոտի խանութում:
(№ 144)

НЪМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, ԳԻՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ՝ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմերներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենսալներին նման: Նոմերների գինը 50 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայող հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» շրթ-թար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բէստօրան, տեղեփօն, քաղցր զէնների խանութ, լրագիրներ:
Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 120—130 (2.)